ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

# «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Իմացական գործընթացներ

*(Հիշողություն, Մտածողություն եւ խոսք, Երեւակայություն)*

***Ուսումնական ծրագիր***

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 159.9
ԳՄԴ 88
Հ 300

*Երաշխավորվել է տպագրության ԵՊՀ Փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետի խորհրդի կողմից*

Կազմող ՝ հոգեբանական գիտությունների թեկնածու **Դ. Ռ. Հայրապետյան**

Գրախոսողներ՝
հ.գ.դ, պրոֆեսոր **Հ.Մ. Ավանեսյան**
հ.գ.թ., **Հ.Ռ. Հովհաննիսյան**

**Դ. Ռ. Հայրապետյան**
Հ 300 «Հոգեբանության հիմունքներ. իմացական գործընթացներ» դասընթացի ուսումնական ծրագիր: Եր.: Երեւանի պետ. համալս. հրատ., 2008, 64 էջ:

«Իմացական գործընթացներ» դասընթացի այս բաժնի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեկան ճանաչողական գործընթացների երկրորդ խմբին՝ այն է, հիշողությանը, մտածողությանը, խոսքին եւ երեւակայությանը, նրանց գիտական ուսումնասիրման արդյունքներին, մեթոդներին եւ մեխանիզմներին:

© Դ.Ռ. Հայրապետյան, 2008

ISBN 978-5-8084-0944-6

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հոգեբանության հիմունքներ՝ հիշողություն, մտածողություն եւ խոսք, երեւակայություն» առարկայի ուսումնական համակարգը նախատեսված է ԵՊՀ Փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետի հոգեբանության բաժնի առաջին կուրսի ուսանողների համար: Այն կազմված է չորս հիմնական բաժիններից՝ առարկայի ուսումնական ծրագիր, սեմինար պարապմունքների պլան, գործնական աշխատանքների ուղենիշեր եւ սեմինար պարապմունքների թեմաներով թեստային առաջադրանքներ:

Առաջին բաժնում նշվում են առարկայի նպատակն ու խնդիրները, ներկայացվում են թեմատիկ պլանները, մանրամասը տրվում է ուսումնական ծրագիրը, հիմնական եւ լրացուցիչ գրականության ցանկը, ինչպես նաեւ կրեդիտային համակարգով նախատեսված յուրաքանչյուր թեմայով տարվող ինքնուրույն աշխատանքի ուղղվածությունն ու հանձնարարականները:

Երկրորդ բաժնում առաջարկվում են սեմինար պարապմունքների թեմաներն ու պլանները, տրվում են դրանց պատրաստվելու մեթոդական ցուցումներ:

Երրորդ բաժնում ներկայացված են գործնական աշխատանքների հիմնական ուղղությունները, առաջադրանքներն ու խնդիրները:

Չորրորդ բաժնում ներկայացված են թեստային առաջադրանքներ, որոնք նախատեսվում են սեմինար պարապմունքների թեմաներով գիտելիքների ստուգում իրականացնելու համար: Թեստային առաջադրանքների պատասխանների որոնումը կօգնի ուսանողներին արդյունավետ կազմակերպել համապատասխան թեմաների յուրացման ժամանակ ինքնուրույն աշխատանքը:

Հավելված 1-ում ներկայացվում է առարկայի քննական հարցաշարը:

«Հոգեբանության հիմունքներ» առարկայի «Հիշողություն, մտածողություն եւ խոսք, երեւակայություն» բաժինը ընդհանուր մասնագիտական բլոկի առարկաներից է: Ծրագիրը հեղինակային է եւ կարդացվում է «Զգայություն, ընկալում, ուշադրություն» առարկայի հիման վրա եւ շարունակում է իմացական գործընթացների ուսումնասիրումը:



Առարկայի հիմնական նպատակն է ուսանողներին ծանոթացնել բարձրագույն իմացական գործընթացների հոգեբանական ուսումնասիրություններին, ցույց տալ հոգեկան արտացոլման բարձրագույն ձեւերի յուրակերպությունը, ներկայացնել դասական եւ ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների եւ խնդիրների գիտական բացատրությունները:

Առարկայի խնդիրներն են.

- քննարկել հիշողության, մտածողության, խոսքի եւ երեւակայության հոգեբանության հիմնական տեսական մոտեցումները,
- ուսումնասիրել այդ գործընթացների հիմնական հոգեբանական օրենքները,
- քննարկել հիշողության, մտածողության, խոսքի եւ երեւակայության ծագումնաբանական հիմնական խնդիրները,
- յուրացնել նրանց բնութագրող հիմնական հասկացութային համակարգը,
- ուսումնասիրել հիշողության, մտածողության, խոսքի եւ երեւակայության խնդիրների վերաբերյալ հիմնարար հոգեբանական աշխատությունները (սկզբնաղբյուրները),
- ծանոթացնել դրանց փորձարարական ուսումնասիրման եղանակներին եւ հիմնական արդյունքներին:

Այս առարկան սերտ փոխկապակցված է «Անձի հոգեբանության», «Հոգեճանաչման», «Փորձարարական հոգեբանության», «Հոգեբանության հիմունքներ»-ի այլ բաժինների հետ:

Ստուգման ձեւը՝ ընթացիկ ակտիվություն, ինքնուրույն աշխատանքի հանձնարարականների կատարում, միջանկյալ գրավոր աշխատանքներ եւ անփոփիչ բանավոր քննություն:

Առարկան հաշվարկված է՝ 64 ժամ դասախոսության, 96 ժամ ինքնուրույն աշխատանքի, 32 ժամ սեմինար պարապմունքների եւ «Հոգեբանության պրակտիկում. հիշողություն, մտածողություն եւ խոսք, երեւակայություն» առարկայի սահմաններում 32 ժամ գործնական աշխատանքների համար:

Առարկայի կրեդիտայնությունը 6 կրեդիտ է:

## ԲԱԺԻՆ 1. «ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ, ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ԽՈՍՔ, ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

### ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիշողության հիմնախնդիրը հոգեբանության մեջ համարվում է դասական եւ դեռ անտիկ ժամանակաշրջանից գրավել է հետազոտողների ուշադրությունը: Հիշողության ուսումնասիրումն ընդգրկում է մի քանի ուղղություններ.

- հիշողության դասակարգումը եւ հիմնական տեսակների առանձնացումը,
- հիշողության ուսումնասիրման մակարդակների որոշարկումը,
- հիշողության գործընթացները, նրանց առանձնահատկությունները եւ օրինաչափությունները մեկնաբանող տեսությունների վերլուծությունը,
- հիշողության անհատական առանձնահատկությունների ուսումնասիրումը,
- հիշողության զարգացման գործոնները եւ օրինաչափությունները բացահայտող տեսությունների քննարկումը,
- հիշողության արդյունավետության բարձրացման մեթոդական հնարների եւ վարժությունների յուրացումը,
- հիշողության խանգարումները:

Հոգեկանի կարեւորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ մարդը արտաքին ազդեցությունների արտացոլումները օգտագործում է ապագայում: Փորձի ձեւավորումը անհնար կլիներ, եթե կուտակվող անհատական փորձն անհետ կորեր:Անցյալում ստացված ինֆորմացիան անհատի կողմից յուրացվում է, պահպանվում եւ վերաարտադրվում այն ժամանակ, երբ այն անհրաժեշտ է: Սա էլ հենց մեր հիշողությունն է:

Այն ընկալումից հետո մարդու բարձրագույն իմացական, ճանաչողական գործունեության հաջորդ աստիճանն է: Այն գրավում է կենտրոնական դեր անձի հոգեկանում՝ մտապատկերների միջոցով միավորելով ճանաչողության տարրական, առաջնային մակարդակը ավելի բարձր վերլուծական մակարդակի հետ:



| | Թեմայի անվանումը | դաս. | սեմ. | գործ. | ինքն. |
|---|---|---|---|---|---|
| 1.1 | Ընդհանուր հասկացություն հիշողության մասին: Հիշողության ֆենոմենոլոգիան: | 2 | 2 | | 6 |
| 1.2 | Հիշողության կազմակերպումը. հիմնական մոտեցումներն ու տեսությունները: | 6 | 2 | | 8 |
| 1.3 | Հիշողության դասակարգումը, տեսակները, ձեւերը: | 4 | 2 | 4 | 6 |
| 1.4 | Հիշողության գործընթացները՝ մտապահում, պահպանում, վերարտադրում, մոռացում: | 4 | 2 | 4 | 8 |
| 1.5 | Հիշողության տարիքային առանձնահատկությունները, զարգացումը: Մնեմոտեխնիկաներ: | 4 | 2 | 2 | 4 |

### ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Թեմա 1.1 Ընդհանուր հասկացություն հիշողության մասին: Հիշողության ֆենոմենոլոգիան:**

«Հիշողություն» հասկացության էտիմոլոգիան: Հիշողության հասկացումը ռետենցիոնալ, ինտենցիոնալ եւ ինֆորմացիոն մոտեցումների տեսանկյունից: Հիշողությունը որպես սինթետիկ հոգեկան գործընթաց:

Հիշողության գործառույթները: Ուշադրություն, զգայություններ, մտածողություն եւ հիշողություն: Հիշողություն եւ անձ:

Հիշողության երեւույթների դասակարգումը: Ամնեզիայի եւ պարամնեզիայի հասկացությունը: Հիշողության պսեվդոռեմինիսցենցիաները: Կոնֆաբուլացիա, կոնտամինացիա, կրիպտոմնեզիա:

Հիպոմնեզիա, հիպերմնեզիա, ֆենոմենալ հիշողություն:

**Ինքնուրույն աշխատանք**

***1.1.1 Մենագրությունների ուսումնասիրում***


1. Веккер Л.М. Психика и реальность: единая теория психических процессов - М.: Смысл, 1998 том 2
2. Клацки Р. Память человека: структуры и процессы. М.:1978. Главы 2, 3, 4.

3. Лурия А. - Маленькая книжка о большой памяти // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
4. Рыбо Т. - Общые амнезии // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.

### *1.1.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ*

1. *Երկակի հիշողության տեսության վերլուծությունը:*
2. *Սենսոր ռեգիստորներ. Փորձարարական ուսումնասիրման հիմնական տվյալները:*
3. *Պատկերների ճանաչման մոդելները:*
4. *Ա. Լուրիայի հետազոտության նկարագրությունը և վերլուծությունը:*
5. *Հիշողությունը որպես սինթետիկ հոգեկան գործընթաց:*

### **Թեմա 1.2 Հիշողության կազմակերպումը. հիմնական մոտեցումներն ու տեսությունները:**

Հիշողության ոչ հոգեբանական (ֆիզիոլոգիական, ֆիզիկական, կենսաքիմիական) տեսությունները:

Հիշողության հոգեբանական տեսությունները: Զուգորդությունների տեսություն: Զուգորդության հասկացությունը, պարզ եւ բարդ զուգորդումներ: Զուգորդությունների տեսության բացատրողական հնարավորությունների սահմանափակ հնարավորությունները:

Հիշողությունը գեշտալտհոգեբանության տեսանկյունից:

Հիշողությունը հոգեվերլուծությունում:

Հիշողությունը գործունեության տեսության տեսանկյունից:

Հիշողության կառուցվածքային մոդելը: Հիշողության հասկացումը որպես ինֆորմացիայի ստացման, վերամշակման եւ պահմանման համակարգ:

Սենսոր ռեգիստր եւ նրա գործառնական կառավարումը: Հիշողության Ատկինսոնի եռաբաղադրիչ մոդելը:

Հիշողության սեմանտիկ կազմակերպման ժամանակակից պատկերացումները: Կլաստերային մոդել: Խմբային մոդել: Հիշողության սեմանտիկ կազմակերպման ցանցային մոդելները:



**Ինքնուրույն աշխատանք**

### *1.2.1 Մենագրությունների ուսումնասիրում*

1. Аткинсон В. Память и уход за ней. Орел, 1992
2. Блонский П. - Основные предположения генетической теории памяти // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
3. Джеймс У. - Память // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
4. Жане П. - Эволюция памяти и понятие времени // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
5. Эббингауз Г. - Смена душевных образований // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
6. Уотсон Д. - Удерживание видимых телесных навыков, или §память: // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.

### *1.2.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ*

1. *Հիշողության ոչ հոգեբանական եւ հոգեբանական տեսությունների համեմատական վերլուծություն:*
2. *Հիշողության զուգորդական մեկնաբանությունը եւ նրա քննադատումը գործունեության տեսության տեսանկյունից:*
3. *Մոռացման գործընթացը հոգեվերլուծությունում, զուգորդական եւ գործունեության տեսությունում. համեմատական վերլուծություն:*
4. *Հիշողությունը ըստ Ատկինսոնի, համեմատումը կառուցվածքային մոդելի հետ:*
5. *Հիշողության գենետիկական եւ բիհեյվիորիստական մոտեցումների քննադատական վերլուծություն:*

### **Թեմա 1.3 Հիշողության դասակարգումը, տեսակները, ձեւերը:**

Հիշողության տեսակները ըստ մտապահվող ինֆորմացիայի բնույթի եւ նրա վերարտադրության ձեւի: Պատկերավոր հիշողություն եւ նրա տեսակները: Էյդետիկ հիշողություն: Շարժողական եւ հուզական հիշողություն: Բառատրամաբանական եւ մեխանիկական հիշողություն:

Հիշողության տեսակները ըստ ինֆորմացիայի պահպանման ժամանակահատվածի: Ակնթարթային հիշողություն՝ իկոնիկ եւ էխոնիկ:

Կարճատեւ հիշողություն: Օպերատիվ հիշողություն: Օպերատիվ հիշողության Ա. Բեդդելի եւ Կ. Հիտչի մոդելները:

Օպերատիվ հիշողությունում ինֆորմացիայի թուլացման եւ տեղափոխման մեխանիզմներն ու դրամց նշանակությունը:

Երկարատեւ հիշողություն: Պրոցեդուրային եւ դեկլարատիվ հիշողություն: Սեմանտիկ, ինքնակենսագրական եւ էպիզոդիկ հիշողություն:

Հիշողության ձեւերը: Կամածին եւ ոչ կամածին հիշողություն: Միջնորդավորված եւ անմիջական հիշողություն: Էքսպլիցիտային եւ իմպլիցիտային հիշողություն:

Ոչ կամածին մտապահման տեղը մարդու կենսագործունեության մեջ: Ոչ կամածին մտապահման ուսումնասիրման փորձարարական մեթոդները:

Կամածին հիշողությունը որպես բարձրագույն հոգեկան գործառույթ: Հիշողության կամածին կարգավորման գործունեության մեկնաբանումը: Կամածին եւ ոչ կամածին մտապահման փոխհարաբերությունների վերլուծությունը Ա. Լեոնտեւի, Ա. Սմիռնովի եւ Պ. Զինչենկոյի աշխատություններում:

Հիշողության անհատական հոգեբանական տարբերությունները:

**Ինքնուրույն աշխատանք**

***1.3.1 Մենագրությունների ուսումնասիրում***


1. Зинченко Т.П. Память в экспериментальной и когнитивной психологии. — СПб.: Питер, 2002.
2. Клацки Р. Память человека: структуры и процессы. М.:1978. Главы 5, 6, 7, 8, 9.
3. Леонтьев А. — Логическая и механическая память // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
4. Линдсей П., Норман Д. — Системы памяти // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
5. Рубинштейн С. - Память // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.




***1.3.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ***

1. *Կրկնության դերը հիշողության գործընթացում. համեմատական վերլուծություն*
2. *Էքսպերիմենտներ դիստրակտորով:*
3. *Տեսողական կոդերը կարճատեւ հիշողությունում:*
4. *Սեմանտիկ կոդերը կարճատեւ հիշողությունում:*
5. *Հիշողության տեսակների համեմատական վերլուծություն:*

**Թեմա 1.4 Հիշողության գործընթացները:**

Մտապահումը որպես հիշողության գործընթաց: Մտապահման վրա ազդող հիմնական գործոնների բնութագրիչները. նյութի բնույթը, ծավալը, միանմանության-տարանմանության աստիճանը, իմաստավորվածությունը, դիրքորոշումները, դրդապատճառները, հուզական ռեակցիաները, գործունեության դադարները (Զեյգարնիկի էֆեկտ), սուբյեկտի կողմից նյութի կազմակերպումը:

Կրկնությունը որպես մտապահման ղեկավարման միջոց: Կրկնությունների կուտակման եւ բաշխման օրենքը (Յոստի օրենքը):

Վերարտադրումը որպես հիշողության գործընթաց: Ճանաչում: Կամածին եւ ոչ կամածին վերարտադրում: Վերհիշում: Հիշողության ռեմինիսցենցիաները:

Պահպանումը եւ մոռացումը որպես հիշողության գործընթացներ: Ինֆորմացիայի արդյունավետ պահպանման պայմանները: Մոռացման դասական հետազոտությունները: Էբբինհաուզի մոռացման կորը: Ռետրոակտիվ եւ պրոակտիվ արգելակման դերը ինֆորմացիայի մոռացման գործընթացում: Ոչ կամածին մոռացում եւ մոռացումը որպես գործողություն (լետոտեխնիկա):

Մոռացման տեսությունները: «Հետքերի» անհետացման տեսությունները: Ինֆորմացիայի «արտամղման» տեսությունը: Մոռացման դրդապատճառային տեսությունը: Ինֆորմացիայի ինտերֆերենցիայի տեսությունը:

**Ինքնուրույն աշխատանք**

***1.4.1 Մենագրությունների ուսումնասիրում***

1. Зинченко П.И. Непроизвольное запоминание.- М.: 1961.
2. Клацки Р. Память человека: структуры и процессы. М.:1978. Главы 10, 11.
3. Бартлетт Ф. - Человек запоминает. // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 1998.
4. Леонтев А. - Развитие высших форм запоминания. // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 1998.
5. Зейгарник В. - Воспроизвидение незавершенных форм запоминания. // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 1998.
6. Зинченко П. — Непроизвольное запоминание и деятельность. // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 1998.
7. Смирнов А.А. Проблемы психологии памяти // Избранные психологические труды. Т.2. М.:Педагогика, 1987.

***1.4.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ***

*1. Կամածին եւ ոչ կամածին մտապահման առանձնահատկությունները:*
*2. Ինֆորմացիայի իմաստավորվածության դերը մտապահման գործընթացում. տեսությունները, փորձարարական ուսումնասիրությունները:*
*3. Զեյգարնիկի էֆեկտ. փորձարարական հիմնավորումը:*
*4. Կազմակերպվածությունը ազատ վերհիշման գործընթացում:*
*5. Ազդակի բացահայտման տեսությունը եւ ճանաչումը:*

**Թեմա 1.5 Յիշողության տարիքային առանձնահատկությունները, զարգացումը: Մնեմոտեխնիկաներ:**

Յիշողության գործառնման հիմնական գենետիկական տեսակները. անգիտակցական (տեսակային), իմպրինտինգ, կենսական:

Յիշողություն եւ խոսք: Յիշողության խնդիրները Լ. Վիգոտսկու մշակութապատմական տեսությունում: Յիշողության զարգացման զուգահեռանիստը:

Յիշողության տարիքային առանձնահատկությունները:



Յիշողություն եւ գործունեություն: Յիշողության կառուցվածքագործառնական մոդելը:

Յիշողության ուսումնասիրման կիրառական ասպեկտները: Յիշողության զարգացման պայմաններն ուսումնական գործունեության ժամանակ:

Մնեմոտեխնիկաներ. հիշողության զարգացման հնարները: Մտապահման «Ջորդանո» համակարգը:

**Ինքնուրույն աշխատանք**

***1.5.1 Մենագրությունների ուսումնասիրում***

1. Ляудис В.Я. Память в процессе развития. М.:МГУ, 1976.
2. Солсо Р. - Мнемонические системы. // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
3. Миллер Дж. - Магическое число семь плюс или минус два. // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
4. Выготский Л. - Память и ее развитие в детском возрасте. // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
5. Челпанов - Что такое мнемоника. // Психология памяти. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
6. Хофман И. Активная память. М.: Прогресс, 1986.

***1.5.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ***

*1. Յիշողության զարգացումը մանկական տարիքում:*
*2. Յիշողության զարգացման բարձրագույն մակարդակ: Գերհիշողություն:*
*3. Մնեմոտեխնիկաներ: Զարգացման պատմությունը եւ մոտեցումները:*
*4. Ջորդանոյի համակարգը:*

### Հիմնական եւ լրացուցիչ գրականություն


1. Аткинсон Р. Человеческая память и процесс обучения / пер. С англ. Под общей ред. Ю.М.Забродина, Б.Ф.Ломова.- М: Прогресс,1980
2. Аткинсон В. Память и уход за ней. Орел, 1992
3. Блонский П.П. Память и мышление Питер, 2001
4. Вейн А.М., Каменецкая Б.И. Память человека.- М.: 1973.
5. Веккер Л.М. Психика и реальность: единая теория психических процессов — М.: Смысл, 1998
6. Величковский Б.М. Современная когнитивная психология. М.:МГУ, 1987.
7. Вучетич Г.Г., Журавлёв Г.Е. К вопросу о структуре процесса запоминания // Психологические механизмы памяти и её закономерности в процессе общения. Харьков, 1970.С.33-36.
8. Выготский С.Л. Собрание сочинений: В 6 т.—М., 1982.—Т. 2.
9. Зинченко П.И. Непроизвольное запоминание.- М.: 1961.
10. Зинченко Т.П. Память в экспериментальной и когнитивной психологии. — СПб.: Питер, 2002.
11. Клацки Р. Память человека: структуры и процессы. М.:1978.
12. Лурия А.Р. Внимание и память.- М., Изд-во МГУ,1975
13. Лурия А.Р. Маленькая книжка о большой памяти. Ум мнемониста. — М., 1968.
14. Ляудис В.Я. Память в процессе развития. М.:МГУ, 1976.
15. Миккадзе Ю.В. О воспроизведении смыслового материала //Психология познавательной деятельности. М., 1978. С.109-122.
16. Найссер У. Познание и реальность. М.,1981.
17. Познавательная активность в системе процессов памяти / Под ред. Н.И.Чуприковой. М.:Педагогика, 1989.
18. Психология памяти / Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 1998.
19. Смирнов А.А. Проблемы психологии памяти // Избранные психологические труды. Т.2. М.:Педагогика, 1987.
20. Хофман И. Активная память. М.: Прогресс, 1986.
21. Хрестоматия по общей психологии: Психология памяти/ Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.Я.. Романова.- М., Изд-во МГУ, 1979




## 2. ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔ

Մտածողությունը վերաբերում է մարդու կողմից արտաքին աշխարհի ճանաչման տրամաբանական, ռացիոնալ փուլին, որն իր բովանդակությամբ տարբերվում է անմիջական, զգայական ճանաչման մակարդակից, ուր արտաքին աշխարհի պատկերը առավելապես ձեւավորվում էր զգայության եւ ընկալման պատկերներից:

Մտածողություն ասելով հասկանում ենք մարդու կողմից իրականության միջնորդավորված, ընդհանրացված արտացոլումը՝ իր էական կապերով եւ հարաբերություններով:

Մտածողությունն ընդգրկում է մտածողական օպերացիաների համակարգ՝ վերլուծություն, համադրություն, համեմատություն, վերացարկում, ընդհանրացում, դասակարգում, համակարգում: Եվ եթե դիտարկում ենք մտածողությունը որպես խնդրի լուծման գործընթաց, ապա այդ գործընթացը սկսվում եւ ի հայտ է գալիս, երբ մարդը վերլուծում է, համեմատում, համադրում եւ այլն:

Մտածողությունը մարդու բարձրագույն իմացական գործունեության վերլուծա-համադրական ասպեկտն է, որը ապահովում է նոր կամ սուբյեկտիվ նոր գիտելիքի ստեղծումը:

Մտածողությունն անխզելիորեն կապված է խոսքի եւ խոսքային գործունեության հետ՝ որպես երկրորդ ազդարարային համակարգ:

Խոսքը մարդու գործունեության այն տարատեսակն է, որը կապված է լեզվի օգտագործման հետ: Խոսքը մարդկային հաղորդակցման եւ մտածողության հիմնական գործիքն է:

Խոսքում արտացոլվում են մարդու անհատական տարիքային, սեռային, ինտելեկտուալ եւ մասնագիտական առանձնահատկությունները:

Գործառնական մակարդակում մտածողության գործիքներից մեկն էլ հենց հասկացութային համակարգն է:

| | Թեմայի անվանումը | դաս. | սեմ. | գործ. | ինքն. |
|---|---|---|---|---|---|
| 2.1 | Մտածողության հասկացությունը: Մտածողության տեսակները: | 4 | 2 | 2 | 6 |
| 2.2 | Մտածողության տեսությունները: | 8 | 4 | | 10 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.3 | Մտածողություն եւ գիտելիք: | 2 | | | 2 |
| 2.4 | Դրդապատճառները եւ հույզերը մտածողական գործունեությունում: | 2 | 2 | 2 | 4 |
| 2.5 | Մտածողության անհատական առանձնահատկությունները: | 2 | 2 | 4 | 4 |
| 2.6 | Զարգացման սկզբունքը մտածողության հոգեբանությունում: | 2 | | 2 | 2 |
| 2.7 | Ինտելեկտի հիմնախնդիրը: | 2 | 2 | 2 | 6 |
| 2.8 | Լեզու եւ խոսք: | 2 | | 2 | 4 |
| 2.9 | Խոսքի տեսությունները | 4 | 2 | | 6 |

## ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Թեմա 2.1 Մտածողության հասկացությունը:**
**Մտածողության տեսակները:**

Մտածողության էությունը: Զգայական եւ ռացիոնալ ճանաչողություն: Մտածողության հոգեբանական ուսումնասիրման առանձնահատկությունները ի տարբերություն գնսեոլոգիայի, տրամաբանության, կիբեռնետիկայի, ԲՆԳ ֆիզիոլոգիայի:

Մտածողության հասկացման տարբեր մոտեցումները Ու. Ջեյմսի, Կ. Դունկերի, Ժ. Պիաժեի, Ա. Լեոնտեւի, Ս. Ռուբինշտեյնի, Օ. Տիխոմիրովի աշխատություններում:

Խնդիրը որպես մտածողության օբյեկտ: Խնդրի կառուցվածքը:

Խնդիրների լուծումը որպես տեսական եւ գործնական հիմնախնդիր: Խնդրի լուծման փուլերը:

Մտածողության դասակարգման չափանիշները: Ակնառու-գործնական, ակնառու-պատկերավոր եւ բառատրամաբանական մտածողության տեսակները որպես օնթոգենեզում մտածողության զարգացման փուլեր եւ տեսակներ: Ինտուիտիվ եւ վերլուծական մտածողություն: Տեսական եւ գործնական մտածողություն (Բ. Տեպլով): Իրատեսական եւ աուտիկ մտածողություն (Է. Բլեյեր): Ստեղծագործական եւ քննադատական մտածողություն (Գ. Լինդսեյ, Կ. Հոլլ, Դ. Հալպերն): Արդյունավետ եւ վերաստեղծող մտածողություն:

Մտածողության տարբեր տեսակների հարաբերակցությունը:



**Ինքնուրույն աշխատանք**

***2.1.1 Մենագրությունների ուսումնասիրում***


1. Арнхейм Р. — Визуальное мышление. // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.В. Петухова. - М.: Изд-во МГУ, 1981.
2. Боно Э. Де. Латеральное мышление. Минск, Попурри, 2005.
3. Веккер Л.М. Психика и реальность: единая теория психических процессов — М.: Смысл, 1998 том 3
4. Линдсей Г., Халл К., Томпсон Р. — Творческое и критическое мышление - Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.В. Петухова. - М.: Изд-во МГУ, 1981.
5. Теплов Б. - Практическое мышлемие // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.В. Петухова. - М.: Изд-во МГУ, 1981.
6. Тихомиров, О.К. Психология мышления М.: 1984. Главы 1, 2.
7. Халперн Д. Психология критического мышления. СПб, 2000.


***2.1.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ***

1. *Մտածողության սեռային հատկությունների վերլուծությունը:*
2. *Մտածողության տեսակների դասախարգումը. համեմատական վերլուծություն:*
3. *Ստեղծագործական եւ քննադատակամ մտածողությունների վերլուծություն:*
4. *Մտածողության առարկայի եւ սուբյեկտի վերլուծություն:*

**Թեմա 2.2 Մտածողության տեսությունները:**

*Մտածողությունը որպես պատկերացումների զուգորդում:* Զուգորդումը որպես բացատրողական սկզբունք: Մտածողության էության, գործընթացի եւ զարգացման վերաբերյալ զուգորդումների տեսության հետեւորդների պատկերացումները: Մտային գործունեության փորձարարական ուսումնասիրությունները:

*Մտածողությունը որպես գործողություն (Օ. Կյուլպե, Ն. Ախ):* Մտածողությունը որպես ներքին գործողություն (ակտ): Համակարգային ինքնադիտումը որպես Վյուրցբյուրգյան դպրոցի հիմնական մեթոդ: Մտածողությունը որպես որոշակի խնդրին ծառայող «ԵՍ»-ի աշխատանք: Խնդրի կառուցվածքը. նպատակի

պատկերացում եւ պայմանավորող միտում: Դիրքորոշման հասկացությունը:

*Մտածողությունը որպես ինտելեկտուալ օպերացիաների գործառնություն:* Օ. Զելցի տեսությունը: Խնդրի լուծման գործընթացի ուսումնասիրումը: Ինտելեկտուալ օպերացիաների տեսակները:

*Մտածողությունը որպես իրավիճակի վերակառուցվածքավորման ակտ (Մ. Վերտհայմեր, Վ. Կելլեր, Կ. Դունկեր):* Կառուցվածքի սկզբունքը որպես հոգեկան գործընթացների գործառնության ունիվերսալ սկզբունք: Վ. Կելլերի գիտափորձերը: Ինսայթը որպես ինտելեկտուալ վարքի էական բնութագրիչ: Գեշտալտ հոգեբանների պատկերացումը մտածողության արդյունավետ բնույթի մասին: Խնդրի լուծման փուլերը (Մ. Ծերտյայմեր):

*Մտածողությունը որպես վարք (Ջ. Ուոտսոն, Է. Թոլմեն, Դ. Միլլեր):* Մտածողության հասկացումը Ջ. Ուոտսոնի դասական բիհեյվիորիզմում: Մտածողությունը որպես զգայաշարժողական ակտ, որն ընգրկում է խոսքային ռեակցիա եւ շարժում: Ուոտսոնի կողմից առաջարկված մտածողության երեք հիմնական տեսակները: Խնդրային իրավիճակի լուծումը փորձի եւ սխալի միջոցով: Անցյալի փորձի դերը խնդրային իրավիճակի լուծման գործընթացում: Է. Թոլմենի կոգնիտիվ տեսությունը որպես գեշտալտհոգեբանության եւ բիհեյվիորիզմի փոխազդեցության արդյունք:

*Մտածողությունը որպես դրդապատճառային գործընթաց (Զ. Ֆրոյդ):* Անգիտակցականի դերը մտածողության գործընթացում: Ազատ ասոցիացիաների մեթոդը: Սուբլիմացիան որպես ստեղծագործական մտածողության մեխանիզմ: Դրդապատճառի գիտակցման հիմնախնդիրը:

*Մտածողությունը որպես կենսաբանական գործընթաց (Ժ. Պիաժե):* Ինտելեկտը որպես օրգանիզմին միջավայրին հարմարման կայուն եւ ճկուն ձեւ: Յարմարումը որպես ասիմիլյացիայի եւ ակոմոդացիայի միասնություն: Առարկայական գործողությունը որպես երեխայի եւ միջավայրի միջնորդող օղակ: Ինտելեկտի զարգացման փուլերը եւ դրանց բնութագրիչները:

*Մտածողությունը որպես բարձրագույն հոգեկան գործառույթ (Լ. Ս. Վիգոտսկի):* Մտային զարգացման հիմնախնդիրը Վիգոտսկու աշխատություններում: Բառային նշանակությունների



ձեւավորումը որպես երեխայի ինտելեկտուալ զարգացման հիմք: Յասկացությունների ընդհանրացումը որպես մտածողության զարգացման չափանիշ: Յասկացության ձեւավորման երեք փուլերը: Մտածողության կառուցվածքի եւ գործառույթի միասնության օրենքը:

*Մտածողությունը որպես գործընթաց (Ս. Ռուբինշտեյն, Ա. Բրուշլինսկի, Կ. Աբուլխանովա-Սլավսկայա) եւ որպես գործունեություն (Ա. Լեոնտեւ, Օ. Տիխոմիրով, Պ. Գալպերին):* Մտածողության հոգեբանության մեջ պատճառականության սկզբունքի իրականացումը: Խնդրային իրավիճակը որպես մտածողության առաջացման սկզբնական արտաքին պայման: Մտածողության գործընթացում սուբյեկտի եւ օբյեկտի փոխազդեցությունը: Մտածողության երկու տեսական մոդելների համեմատությունը՝ մտածողությունը որպես գործընթաց եւ գործունեություն: Մտածողական օպերացիաները որպես մտածողության մեխանիզմներ:

Մտածողությունը որպես գործունեություն: Մտածողության սուբյեկտը: Մտային գործողությունների փուլային ձեւավորման տեսությունը (Պ. Գալպերին):

*Մտածողության միջմշակութային հետազոտությունները (Ջ. Բրուներ, Մ. Կուոլ, Լ. Լեւի Բրյուլ, Կ. Լեւի Ստրոսս, Ա. Լուրիա):* Տարբեր մշակույթների ներկայացուցիչների ճանաչողական գործունեության առանձնահատկությունների համեմատական վերլուծություն:

Մի մշակույթի պայմաններում ստեղծված ինտելեկտուալ թեստերով մեկ այլ մշակույթի ներկայացուցիչների մտածողության ուսումնասիրման անհնարինությունը: Անհատական եւ համամարդկային փորձի փոխազդեցությունը: Յամամարդկային փորձի դրական եւ բացասական ազդեցությունը անհատական մտածողության վրա:

**Ինքնուրույն աշխատանք**

***2.2.1 Մենագրությունների ուսումնասիրում***

1. Вертгеймер М. Продуктивное мышление. М, Прогресс, 1987.
2. Джеймс, У. - Мышление // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. - М.: Изд-во Моск. Ун-та, 1981.

3. Крогиус, А.А. - Вюрцбургская школа экспериментального исследования мышления // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. — М.: Изд-во Моск. Ун-та, 1981.
4. Кюльпе, О. - Психология мышления // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. — М.: 1981.
5. Мартиросян К. - Мышление и речь. Ереван 2002. Глава 2.
6. Основные направления исследований психологии мышления в капиталистических странах/под ред. Е.В.Шороховой М.: 1966.
7. Пиаже Ж. - Природа интеллекта. // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.В. Петухова. - М.: Изд-во МГУ, 1981.
8. Рубинштейн, С.Л. - О мышлении и путях его исследования. - М.: Изд-во АН СССР, 1958.
9. Тихомиров, О.К. Психология мышления М.: 1984. Глава 10.
10. Рубинштейн С. - О природе мышления и его составе // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. — М.: Изд-во Моск. Ун-та, 1981.
11. Леонтьев А. - Мышление // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. — М.: Изд-во Моск. Ун-та, 1981.

### *2.2.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ*

1. *Մտածողության վարքային եւ զուգորդական տեսության համեմատական վերլուծություն:*
2. *Մտածողության անձնային դրդապատճառային տեսությունների համեմատական վերլուծություն:*
3. *Մտածողության գործընթացային եւ գործունության տեսությունների համեմատական վերլուծություն:*
4. *Մտածողության միջմշակութային տեսությունների փորձարարական տվյալները:*
5. *Մտածողության օպերացիոնալ եւ պատմամշակութային տեսությունների համեմատական վերլուծություն:*
6. *Մտածողության ուսումնասիրման Վյուրցբյուրգյան դպրոցը:*



### Թեմա 2.3 Մտածողություն եւ գիտելիք:

Մտածողության եւ գիտելիքի փոխազդեցության երկու կողմերը. մտածողության ձեւավորման կախվածությունը գիտելիքների յուրացումից եւ գիտելիքների ազդեցությունը մտածողության գործառնության վրա: Ակտուալիզացիա եւ փոխանցում՝ մտածողության եւ գիտելիքների փոխազդեցության երկու ձեւ: Նախկին փորձի օգտագործումը ճանաչողության եւ նորի բացահայտման գործընթացում:

Անհատական եւ սոցիալական փորձի փոխհարաբերությունը. գիտելիքների «վերաբացահայտման» ֆենոմենը: Գիտելիքների դերը մտածողության զարգացման գործընթացում: Գիտելիքների յուրացման կախվածությունը մտածողական գործունեության բնույթից:

### *2.3.1 Մենագրությունների ուսումնասիրում*

1. Тихомиров, О.К. Психология мышления М.: 1984. Глава 7.

### *2.3.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ*

1. *Սեմանտիկ ցանցերը ըստ Տիխոմիրովի: Պատրաստի գիտելիքների յուրացում եւ կոնտեքստային իմաստներ:*
2. *Շփման եւ ընդհանրացման միասնության սկզբունքը:*

### Թեմա 2.4 Դրդապատճառները եւ հույզերը մտածողական գործունեությունում:

Լուծվող խնդիրների սոցիալական եւ անհատական նշանակությունը: Մտային գործունեության դրդապատճառավորման յուրակերպությունը: Մտածողության ներքին եւ արտաքին դրդապատճառները եւ դրանց փոխկապակցվածությունը:

«Խնդիր» եւ «խնդրային իրավիճակ» հասկացությունները: Խնդրային իրավիճակը որպես նոր ճանաչողական պահանջմունքի ակտուալիզացիա: Խնդրային իրավիճակի կառուցվածքը (Ա. Մատյուշկին). ճանաչողական պահանջմունք, պահանջմունքի առարկա, մարդու ինտելեկտուալ հնարավորություններ:

Կայուն եւ իրավիճակային դրդապատճառներ: Ինքնին մտածողական գործընթացում ճանաչողական դրդապատճառների ձեւավորման ուսումնասիրումը (Ա. Բրուշլինսկի): Դրդապատճառը որպես մտածողության արդյունավետության գործոն: Դրդա-

պատճառների դերը էվրիստիկ խնդիրների լուծման գործընթացում:

Մտածողական գործունեության ակտիվացման գործոնները. հետաքրքրությունը խնդրին, վերաբերմունքը լուծվող խնդրին, լուծման գործնթացում ակտիվ ընդգրկում, անվտանգ պայմաններ, դրական ամրապնդում, չափավոր լարված հուզական վիճակ:

Մտածողության եւ հույզերի փորձարարական ուսումնասիրությունները (Օ. Տիխոմիրով): Հուզական ակտիվության կապը լուծվող խնդրի տեսակից (վերարտադրողական, ստեղծագործական): Հուզական ակտիվացումը եւ խնդրի լուծման հիմնական սկզբունքի հայտնագործումը: Հուզական ակտիվացման կարգավորող եւ էվրիստիկ գործառույթները: Հուզական ակտիվացման եւ ստեղծագործության կապը:

**Ինքնուրույն աշխատանք**

***2.4.1 Մենագրությունների ուսումնասիրում***


1. Психологические механизмы целеобразования / под ред. О.К.Тихомирова. - М.: Наука, 1977.
2. Тихомиров, О.К. Психология мышления М.: 1984. Главы 4, 5.


***2.4.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ***

1. *Հուզական ակտիվացումը խնդրի լուծման գործընացում: Օ. Տիխոմիրովի փորձարարական տվյալները:*
2. *Հուզական ակտիվացման գործառույթների համեմատական վերլուծություն:*
3. *Մտածողական գործընթացների դրդապատճառային հիմունքները: Դրդապատճառներ եւ նպատակածեւավորում:*

**Թեմա 2.5 Մտածողության անհատական առանձնահատկությունները:**

Խնդրի լուծման գործընթացում դրսեւորվող անհատական առանձնահատկությունները: Ներշնչվողականություն եւ քննադատականություն: Ճանաչողական ոճերը որպես իրականության հետազոտման անհատական միջոց: Ոճերի եւ ընդունակությունների չափանիշները:



Էքստրավերտ եւ ինտրովերտ անձանց անհատական մտածողական առանձնահատկությունները (Կ. Յունգ):

Ոճային հատկությունների չորս տիպ. ինֆորմացիայի կոդավորման ոճեր, կոգնիտիվ ոճեր, ինտելեկտուալ ոճեր, էպիստեմոլոգիական ոճեր:

***2.5.1 Մենագրությունների ուսումնասիրում***


1. Тихомиров, О.К. Психология мышления М.: 1984. Глава 8.
2. Юнг К. — Мышление у экстраверта и интроверта. // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.В. Петухова. — М.: Изд-во МГУ, 1981.


***2.5.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ***

1. *Մտածողության եւ ինէնագիտակցության հիմնախնդիրը հոգեբանությունում:*
2. *Մտածողության անձնային առանձնահատկությունների վերլուծություն:*

**Թեմա 2.6 Զարգացման սկզբունքը մտածողության հոգեբանությունում:**

Մտածողության զարգացման ասպեկտները՝ ֆիլոգենեզ, օնթոգենեզ, ֆունկցիոգենեզ:

*Մտածողության զարգացումը ֆիլոգենեզում:* Վարքը որպես օրգանիզմի եւ արտաքին միջավայրի ակտիվ փոխներգործության գործընթաց: Ուսուցումը, որոնողա-հետազոտական գործունեությունը, ինտելեկտուալ վարքը որպես կենդանիների վարքի անհատական-փոփոխական տեսակներ: Ինտելեկտուալ վարքի առաջացումը՝ գործիքների օգտագործումը, ստեղծումը, արգելքների հաղթահարումը:

*Մտածողության օնթոգենետիկ զարգացումը:* Մտածողության զարգացման փուլերը օնթոգենեզում:Խոսքի դերը ճանաչողական գործընթացների զարգացման գործընթացում: Ուսուցման դերը տեսական մտածողության ձեւավորման գործընթացում:

*Մտածողության զարգացման գործառութային կողմը:* Իրական իրավիճակում մտածողության գործընթացի աշխատանքը:

*2.6.1 Մենագրությունների ուսումնասիրում*

1. Мартиросян К. - Мышление и речь. Ереван 2002. Глава 3.
2. Тихомиров, О.К. - Психология мышления М.: 1984. Глава 9.

*2.6.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ*

1. *Մարդու մտածողության կենսաբանական նախադրյալները:*
2. *Մտածողության ֆիլոգենետիկ եւ օնթոգենետիկ զարգացման համեմատական վերլուծություն:*

**Թեմա 2.7 Ինտելեկտի հիմնախնդիրը:**

Մտածողություն եւ ինտելեկտ հասկացությունների հարաբերակցությունը: Ինտելեկտի հոգեբանության ոլորտում երեք խումբ հետազոտություններ. ինտելեկտի հոգեգենետիկա, ինտելեկտի ընդհանուր հոգեբանություն եւ հոգեմետրիկա: Մտային ընդունակությունների Ֆ. Հալտոնի տեսությունը: Ինտելեկտի բնույթի եւ էության հասկացման հիմնական մոտեցումները՝ սոցիո-մշակութային, գենետիկական, պրոցեսուալ-գործունեութային, կրթական, ինֆորմացիոն, ֆենոմենոլոգիական, կառուցվածքա-մակարդակային, կարգավորող: Ինտելեկտի ժամանակակից հասկացումը եւ մոդելները:

**Ինքնուրույն աշխատանք**

*2.7.1 Մենագրությունների ուսումնասիրում*

1. Բոնո Է. Դե - Նոր մտքի ծնունդը: Երեւան, Սովետական գրող, 1982:
2. Дружинин В. Н. - Психология общих способностей. СПб, 2000.
3. Кирхлер Э., Щротт А. - Принятие решений в организациях. Харьков, 2004. Глава 4
4. Креч Д., Крачфилд Р., Ливсон Н. - Фактори, определяющие решение задач // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. - М.: Изд-во Моск. Ун-та, 1981.
5. Трик Х. Е. Основные направления эксперементального изучения творчества. // Хрестоматия по общей психологии. Психология мышления. Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. - М.: Изд-во Моск. Ун-та, 1981.
6. Холодная, М.А. - Психология интеллекта. СПб.: 2002. Глава 1,4.



*2.7.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ*

1. *Ինտելեկտի սահմանումները: Ինտելեկտի ուսումնասիրման մոտեցումների համեմատական վերլուծություն:*
2. *Ինտելեկտը որպես ադապտատիվ ընդհանուր ընդունակություն (Վ. Դրուժինին):*
3. *Ինտելեկտի Մ. Խոլոդնայայի մոդելը:*
4. *Ինտելեկտի եւ ստեղծագործական մտածողության փոխհարաբերակցության հիմնախնդիրները:*
5. *Ինտելեկտի դիագնոստիկայի հիմնախնդիրները:*
6. *Որոշման ընդունման մոդելների համեմատական վերլուծություն:*
7. *Խմբային եւ անհատական որոշումների ընդունման առավելություններն ու թերությունները:*
8. *Շաբլոն եւ ոչ շաբլոն մտածողությունների համեմատական վերլուշություն:*

**Թեմա 2.8 Լեզու եւ խոսք:**

Լեզվի եւ խոսքի հիմնական հասկացումները. նրանց նույնացումը (Վ. Վունդտ, Վ. Հումբոլտ), նրանց հակադրումը՝ լեզուն որպես համակարգային կառուցվածք ունեցող կայուն սոցիալական երեւույթ, իսկ խոսքը որպես հոգեբանական երեւույթ (Ֆ. դե Սոսյուր): Լեզվաբանական եւ հոգեբանական գիտելիքների միացումը՝ հոգելեզվաբանության առաջացումը:

Խոսքի տեսակները: Բանավոր եւ գրավոր խոսք, նրանց յուրահատկությունները: Գրավոր խոսքի առաջացման պատմությունը: Բանավոր խոսքի հիմնական տարատեսակները՝ մենախոսություն, երկխոսություն:

Ներքին խոսքի հիմնական առանձնահատկությունները: Ներքին խոսքի զարգացումը:

Խոսքի գործառույթները: Խոսքը որպես հաղորդակցում եւ խոսքը որպես մտային գործունեության մեխանիզմ:

Խոսքը որպես վերբալ նյութի ներքին վերամշակում: Ներքին խոսքի յուրահատկությունները (Լ. Վիգոտսկի):

Լեզվի եւ խոսքի ժամանակակից հետազոտությունների երեք մոտեցում՝ կոմունիկատիվ, կոգնիտիվ, գենետիկական:

**Ինքնուրույն աշխատանք**

***2.8.1 Մենագրությունների ուսումնասիրում***

1. Выготский, Л.С. Мышление и речь // Собр. Сочинений: в 6 т. — М.: Педагогика, 1982. — Т. 2. — С. 5 — 361.
2. Леонтьев, А.Н. Генезис человеческой речи и мышления // Психологический журнал. 1988. №4. С.139 — 151.
3. Мартиросян К. - Мыщление и речь. Ереван 2002. Глава 5

***2.8.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ***

*1. Ներքին խոսքի Լ. Վիգոտսկու տեսությունը:*
*2. Խոսքի տեսակների առանձնահատկությունների համեմատական վերլուծություն:*
*3. Հասկացության ձեւավորման հոգեբանական ուսումնասիրությունները:*

**Թեմա 2.9 Խոսքի տեսությունները:**

Խոսքի զուգորդական տեսությունը: (Շտերն, Բյուլեր):

Վիգոտսկին խոսքի զարգացման փուլերի մասին: Ավտոնոմ խոսքը որպես անցումային փուլ խոսքի ոչ լեզվային փուլից խոսքի յուրացմանը:

Էգոցենտրիկ խոսքի հասկացությունը: Ժ. Պիաժեի եւ Լ. Վիգոտսկու բանավեճը էգոցենտրիկ խոսքի էության, կառուցվածքի, գործառույթների, առաջացման եւ զարգացման հարցերի շուրջ:

Խոսքը որպես գործունեություն (Ս. Ռուբինշտեյն, Ա. Լեոնտեւ):

Խոսքի բազմագործառութային բնույթը (հաղորդակցական, նշանային, ինտելեկտուալ):

Բառը որպես ընդհանրացման կրիչ: Խոսքի զարգացումը մտածողության հետ անխզելիորեն կապված որակական փոփոխությունների գործընթաց:

Խոսքը որպես մարդու հոգեկանի ինտեգրատոր (Լ. Վեկկեր):

**Ինքնուրույն աշխատանք**

***2.9.1 Մենագրությունների ուսումնասիրում***

1. Выготский, Л.С. Мышление и речь // Собр. Сочинений: в 6 т. — М.: Педагогика, 1982. — Т. 2. — С. 5 — 361.
2. Соколов, А.Н. Внутренняя речь и мышление. - М., 1977.
3. Мартиросян К. - Мыщление и речь. Ереван 2002. Глава 6



***2.9.2 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ***

*1. Ժ. Պիաժեի եւ Լ. Վիգոտսկու բանավեճը էգոցենտրիկ խոսքի էության, կառուցվածքի, գործառույթների, առաջացման եւ զարգացման հարցերի շուրջ:*
*2. Խոսքի եւ հաղորդակցման հիմնական գործոռույթները:*

***Հիմնական եւ լրացուցիչ գրականություն***

#


1. Абульханова-Славская, К.А. Личностные типы мышления // Когнитивная психология: Материалы фин.-сов. Симпозиума. — М.: Наука, 1986. — С. 154 — 172.
2. Боно Э. Де. Латеральное мышление. Минск, Попурри, 2005.
3. Брушлинский А. В. Мышление и прогнозирование. Москва, Мысль, 1979.
4. Васильев, И.А. Эмоции и мышление / И.А.Васильев, В.Л.Поплужный, О.К.Тихомиров. — М.: Изд-во Моск. Ун-та, 1980.
5. Вертгеймер М. Продуктивное мышление. М, Прогресс, 1987.
6. Выготский, Л.С. Мышление и речь // Собр. Сочинений: в 6 т. — М.: Педагогика, 1982. — Т. 2. — С. 5 — 361.
7. Джеймс, У. Мышление // Хрестоматия по общей психологии. Психология мышления / под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. — М.: Изд-во Моск. Ун-та, 1981. — С. 11 — 20.
8. Дружинин В. Н. Психология общих способностей. СПб, 2000.
9. Дункер, К. Подходы к исследованию продуктивного мышления //Хрестоматия по общей психологии. Психология мышления/ под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова.—М.: 1981.—С. 35—47.
10. Зельц, О. Законы продуктивной и репродуктивной духовной деятельности // Хрестоматия по общей психологии. Психология мышления / под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. — М.: Изд-во Моск. Ун-та, 1981. — С. 28 — 34.
11. Крогиус, А.А. Вюрцбургская школа экспериментального исследования мышления // Хрестоматия по общей психологии. Психология мышления / под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. — М.: Изд-во Моск. Ун-та, 1981. — С. 250 — 254.
12. Крыжановская М. М. Психология мышления. Москва, 1996.
13. Кюльпе, О. Психология мышления // Хрестоматия по общей психологии. Психология мышления / под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.В.Петухова. — М.: 1981. — С. 21 — 27.

14. Леонтьев, А.Н. Генезис человеческой речи и мышления // Психологический журнал. 1988. №4. С.139 — 151.
15. Леонтьев, А.Н. Лекции по общей психологии. М.: Смысл, 2000.
16. Линдсей, П. Переработка информации у человека. — М.: Мир, 1974. — С. 473 — 497.
17. Матюшкин, А.М. Проблемные ситуации в мышлении и обучении. — М.: Педагогика, 1972.
18. Мартиросян К. — Мыщление и речь. Ереван 2002.
19. Миллер, Дж. Программы и структура поведения. — М.:, 2000.
20. Надлер Дж., Хибино М., Фаррелл Дж. Мышление полного спектра. Минск, Попурри, 2001.
21. Основные направления исследований психологии мышления в капиталистических странах/под ред. Е.В.Шороховой М.: 1966.
22. Психологические механизмы целеобразования / под ред. О.К.Тихомирова. — М.: Наука, 1977.
23. Рубинштейн, С.Л. О мышлении и путях его исследования. — М.: Изд-во АН СССР, 1958.
24. Соколов, А.Н. Внутренняя речь и мышление. — М., 1977.
25. Сухарев В. Психология интеллекта. Донецк, Сталкер, 1997.
26. Тихомиров, О.К. Психология мышления М.: 1984.
27. Ушакова, Т.Н. Речь как когнитивный процесс и как средство общения // Когнитивная психология: Материалы фин.-сов. Симпозиума. — М.: Наука, 1986. — С. 131 — 143.
28. Халперн Д. Психология критического мышления. СПб, 2000,
29. Холодная, М.А. Психология интеллекта. СПб.: 2002.
631 Хрестоматия по общей психологии. Психология мышления / под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.В. Петухова. — М.: Изд-во МГУ, 1981.#

## 3. ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Մարդը, լինելով գործունեության ակտիվ սուբյեկտ, ոչ միայն հայում եւ ճանաչում է, այլեւ փոփոխում, վերափոխում է աշխարհը: Արտաքին աշխարհի վերափոխումը սկսվում է մտային փոփոխություններից: Հենց սրան էլ ուղղված է երեւակայությունը: Այն անխզելիորեն կապված է աշխարհը փոփոխելու եւ նորը ստեղծելու մեր ընդունակության հետ:

Երեւակայությունը իր յուրահատուկ իմաստով հատուկ է միայն մարդուն: Իր զարգացման ընթացքում այն սկզբում արդյունք է եւ ապա նախադրյալ մարդու այն գործունեության, ոնրի միջոցով նա փոխում է իրականությունը:



Ցանկացած երեւակայության արդյունք որոշակիորեն նորն է, որը վերափոխում է այն ինչ մեզ տրված է ընկալումներում: Այս փոփոխությունները լայնորեն իրենց հետքն են թողնում ինչպես գեղարվեստական, գիտական ստեղծագործություններում, այնպես էլ յուրաքանչյուրիս կենցաղում:

| | Թեմայի անվանումը | դաս. | սեմ. | գործ. | ինքն. |
|---|---|---|---|---|---|
| 3.1 | Երեւակայությունը որպես ճանաչողական գործընթաց: | 4 | 2 | 2 | 4 |
| 3.2 | Երեւակայության տեսությունները: Երեւակայության զարգացումը եւ նրա գնահատումը: | 8 | 4 | 4 | 10 |
| 3.3 | Երեւակայության դերը ստեղծագործական աշխատանքում: | 4 | 2 | 2 | 6 |

## ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Թեմա 3.1 Երեւակայությունը որպես ճանաչողական գործընթաց:

Երեւակայության սահմանման հիմնախնդիրները: Պատկերացման եւ երեւակայության տարբերությունների էությունը:

Երեւակայության տեսակները: Պասիվ եւ ակտիվ երեւակայություն: Ստեղծագործական եւ վերաստեղծող երեւակայություն: Ստեղծագործական երեւակայության յուրակերպությունը՝ արդյունքի նորությունը եւ յուրահատկությունը, պատկերների վերախմբավորում, որը տարբերվում է անմիջական ընկալման պատկերից (Լ. Վիգոտսկի, Ս. Ռուբինշտեյն, Ա. Պետրովսկի), տարբեր օբյեկտների առարկայական բովանդակությունների միավորում (Օ. Դյաչենկո), պատկերների փոխհաբերականություն:

Երեւակայության գործառույթները. ճանաչողա-էվրստիկական, կանխատեսող, հաղորդակցական, պաշտպանական:

**Ինքնուրույն աշխատանք**

***3.1.1 Մենագրությունների ուսումնասիրում***

1. Брушлинский А.В. Воображение и познание. // Вопросы философии. — 1967. - №11.

2. Коршунова Л.С. Воображение и его роль в познании. — М., 1979
3. Рубинштейн С.Л. Основы общей психологии: В 2-х т. Т. 1. — М., 1989.

***3.2.1 Ռեֆերատիվ աշխատանքների թեմաներ***

1. *Երեւակայությունը որպես բարձրագույն հոգեկան գործընթաց: Նրա կապը մյուս ճանաչողական գործընթացների հետ:*
2. *Երեւակայության տեսակների համեմատական վերլուծություն:*

**Թեմա 3.2 Երեւակայության տեսությունները: Երեւակայության զարգացումը եւ նրա գնահատումը:**

Երեւակայությունը որպես ճանաչողական ոլորտի զարգացման անցողիկ փուլ (Կ. Բյուլեր):

Իրականության ճանաչումը որպես երեւակայության զարգացման աղբյուր: Երեւակայության մեխանիզմները: Երեւակայության զարգացման չորս փուլ (Տ. Ռիբո):

Գեշտալտ հոգեբանների հայացքները երեւակայության բնույթին եւ զարգացմանը (Կ. Կոֆֆկա, Ռ. Արնխեյմ):

Ստեղծագործական երեւակայության խնդիրը հոգեվերլուծաբանների աշխատություններում: Երեւակայության եւ մանկական տարիքի իրադարձությունների միջեւ կապը:

Ժ. Պիաժեի հայացքները երեւակայության բնույթին:

Ստեղծագործությանը քանակական մոտեցում (Ջ. Գիլֆորդ): Կոնվերգենտ եւ դիվերգենտ մտածողություն: Դիվերգենտ մտածողության չափման հիմնախնդիրը:

Ստեղծագործական գործընթացների որակական կողմի առանձնացում: Ստեղծարարության հինգ մակարդակներ (Ջ. Թեյլոր):

Լ. Վիգոտսկու հայացքները ճանաչողական գործընթացում երեւակայության դրական դերի մասին: Երեւակայության զարգացումը մանկական տարիքում:

Երեւակայությունը խաղային գործունեությունում (Դ. Էլկոնին): Խաղի եւ երեւակայության դիալեկտիկական փոխկապակցվածությունը: Խաղի ժամանակ երեւակայության կայացումը որպես ներհոգեկան գործունեություն: Ներքին պլանում գործողության կարողությունը որպես գործունեության տարբեր տարատեսակներում երեւակայության արդյունքների արտաքնայնացման պայման:

Երեւակայության զարգացման մակարդակի գնահատման չափանիշների հիմնախնդիրը: Ստեղծարարությունը որպես արդյունք (Ջ. Թեյլոր), գործընթաց (Գ. Ուոլլես) եւ անձնային ինտեգրալ հատկություն (Ե. Տորրենս):

Ստեղծագործական երեւակայության հնարները:

**Ինքնուրույն աշխատանք**

***3.2.1 Մենագրությունների ուսումնասիրում***

1. Выготский Л.С. Воображение и творчество в детском возрасте. М.: Просвещение, 1991
2. Выготский. Л. С. Психология искусства. Москва; 1986
3. Игнатьев Е.И. О некоторых особенностях изучения представлений и воображения. — М., 1956
4. Рибо Т. Творческое воображение. Спб., 1901.
5. Рубинштейн С.Л. Основы общей психологии: В 2-х т. Т. 1. — М., 1989.
6. Субботина Л.Ю. «Развитие воображения у детей» - Ярославль: Академия развития, 1996.

***3.2.2 Ռեֆերատիվ աշխատանք***

1. *Ստեղծարարության տեսությունների համեմատական վերլուծություն:*
2. *Երեւակայություն եւ խաղ:*
3. *Ստեղծագործական երեւակայության հոգեվերլուծական եւ գեշտալտ հոգեբանական տեսությունների համեմատական վերլուծություն:*

**Թեմա 3.3 Երեւակայության դերը ստեղծագործական աշխատանքում:**

Երեւակայությունը գեղարվեստական ստեղծագործական աշխատանքում: Գեղարվեստական պատկերների ստեղծում: Երեւակայության հնարները գեղարվեստական ստեղծագործական աշխատանքում: Երեւակայություն եւ ներշնչանք:

Երեւակայությունը գիտական ստեղծագործական աշխատանում: Գիտական եւ գեղարվեստական աշխատանքներում երեւակայության դերի եւ հնարների ընդհանրություններն ու տարբերությունները: Գիտական ստեղծագործական աշխատանքի առանձնահատկությունները: Երեւակայություն եւ ինտուիցիա:

Երեւակայությունը եւ մարդու ֆիզիոլոգիական ռեակցիաները:

**Ինքնուրույն աշխատանք**

***3.3.1 Մենագրությունների ուսումնասիրում***

1. Бунге М. Интуиция и наука. — М., 1967
2. Вальт Л.О. Мысленный эксперимент. — Тарту, 1962
3. Выготский. Л. С. Психология искусства. Москва; 1986
4. Горнфельд А.Г. Пути творчества. — Пг., 1922
5. Левинсон-Лессинг Ф.Ю. Роль фантазии в научном творчестве. — Пг., 1923
6. Пармон Э.А. Роль фантазии в научном познании. — М., 1984

***3.3.2 Ռեֆերատիվ աշխատանք***

1. *Գիտական եւ գեղարվեստական ստեղծագործական երեւակայության համեմատական վերլուծությունը:*
2. *Երեւակայության ազդեցությունը ֆիզիոլոգիական գործընթացների վրա:*

***Հիմնական եւ լրացուցիչ գրականություն***


1. Брушлинский А.В. Воображение и познание. // Вопросы философии. — 1967. - №11.
2. Бунге М. Интуиция и наука. — М., 1967
3. Вальт Л.О. Мысленный эксперимент. — Тарту, 1962
4. Выготский Л.С. Воображение и творчество в детском возрасте. М.: Просвещение, 1991
5. Выготский Л.С. Развитие высших психических функций. — М., 1950
6. Выготский. Л. С. Психология искусства. Москва; 1986
7. Горнфельд А.Г. Пути творчества. — Пг., 1922
8. Горский Д.П. Вопросы абстракции и образование понятий. — М., 1961





9. Гурова Л.Л. Воображение // Философская энциклопедия. — М., 1960. — Т.1
10. Игнатьев Е.И. О некоторых особенностях изучения представлений и воображения. — М., 1956
11. Ильенков Э.В. Об эстетической природе фантазии // Вопросы эстетики. — М., 1964. — Вып. 6.
12. Коршунова Л.С. Воображение и его роль в познании. — М., 1979.
13. Коршунова Л.С., Пружинин Б.И. Воображение и рациональность. — М., 1989
14. Левинсон-Лессинг Ф.Ю. Роль фантазии в научном творчестве. — Пг., 1923
15. Михайлова И.Б. Чувственное отражение в современном научном познании. — М., 1972
16. Пармон Э.А. Роль фантазии в научном познании. — М., 1984
17. Рибо Т. Творческое воображение. Спб., 1901.
18. Рубинштейн С.Л. Основы общей психологии: В 2-х т. Т. 1. — М., 1989.

4<1 Субботина Л.Ю. «Развитие воображения у детей» - Ярославль: Академия развития, 1996.#

# ԲԱԺԻՆ 2. ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սեմինար պարապմունքները կարեւոր դեր են խաղում ուսանողների մասնագիտական պատրաստման գործընթացում: Նրանց հիմնական նպատակն է «Հիշողություն, մտածողություն, խոսք եւ երեւակայություն» առարկայի սահմաններում քննարկվող նյութի առավել խորը ուսումնասիրումը:

Սեմինար պարապմունքների խնդիրներն են.

- դասախոսական նյութի ամրապնդում,
- առավել բարդ հարցերի մանրամասը քննարկում,
- հոգեբանական սկզբնաղբյուրների հետ աշխատանքի հմտությունների ձեւավորում,
- ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձեւավորում:

Քննարկումները կարող են անցկացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձեւերով:

Սեմինար պարապմունքների թեմատիկան կապված է դասախոսական նյութի թեմատիկայի հետ՝ լրացնելով այն որոշակի հարցերի ինքնուրույն ուսումնասիրմամբ: Սեմինար պարապմունքների հարցերը արտացոլվում են քննական հարցերում:

Ստուգման ընթացիկ ձեւն է ուսանողների հարցումը, որը կարող է զուգահեռվել թեստային առաջադրանքներով:

**Թեմա 1.**
**Ընդհանուր հասկացություն հիշողության մասին: Հիշողության տեսությունները: (4 ժամ)**

1. Հիշողության ընդհանուր բնութագիրը: Հիշողությունը որպես սինթետիկ հոգեկան գործընթաց:
2. Հիշողության գործառույթները: Հիշողությունը եւ ժամանակը:
3. Հիշողությունը զուգորդումների տեսության ներքո (Գ. Էբինհաուզ):
4. Հիշողությունը գեշտալտհոգեբանության տեսանկյունից (Բ. Զեյգարնիկ, Գ. Բիրենբաում, Կ. Լեւին):
5. Հիշողությունը բիհեյվիորիզմի տեսանկյունից (Ջ. Ուոտսոն):
6. Գործունեության տեսությունը եւ հիշողությունը (Ա. Լեոնտեւ):



7. Հիշողության եռաբաղադրիչ մոդելը (Վ. Ատկինսոն):

*Գրականություն*


1. Аткинсон В. Память и уход за ней. Орел, 1992
2. Веккер Л.М. Психика и реальность: единая теория психических процессов — М.: Смысл, 1998
3. Психология памяти / Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.


**Թեմա 2.**
**Հիշողության տեսակները, ձեւերը եւ գործընթացները: (4 ժամ)**

1. Հիշողության տեսակները, մակարդակները, ձեւերը (Ս. Ռուբինշտեյն):
2. Հիշողության կազմակերպումը (Ի. Հոֆման):
3. Հիշողության համակարգերը (Պ. Լինդսեյ, Դ. Նորման):
4. Հիշողության կառուցվածքը եւ տեսակները (Վ. Ատկինսոն):
5. Հիշողության կառուցվածքը եւ գործընթացները (Ռ. Կլացկի):
6. Հիշողության գործընթացների ուսումնասիրումը (Պ. Զինչենկո):
7. Կամածին եւ ոչ կամածին մտապահում (Ա. Սմիռնով):
8. Մոռացման տեսությունները (Գ. Էբինհաուզ, Զ. Ֆրոյդ):

*Գրականություն*


1. Аткинсон В. Память и уход за ней. Орел, 1992
2. Зинченко П.И. Непроизвольное запоминание.- М.: 1961.
3. Клацки Р. Память человека: структуры и процессы. М.:1978.
4. Психология памяти / Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.
5. Смирнов А.А. Проблемы психологии памяти // Избранные психологические труды. Т.2. М.:Педагогика, 1987.
6. Хофман И. Активная память. М.: Прогресс, 1986.


**Թեմա 3.**
**Հիշողության օնթոգենետիկ զարգացումը: Հիշողության կատարելագործում եւ մնեմոտեխնիկաներ: (2 ժամ)**

1. Հիշողությունը եւ նրա զարգացումը մանկական տարիքում (Լ. Վիգոտսկի):
2. Հիշողության ուսումնասիրման կիրառական ասպեկտները:
3. Հիշողության ֆենոմենները (Ա. Լուրիա):
4. Մնեմոտեխնիկաներ. հիմնական սկզբունքները եւ արդյունքները:

***Գրականություն***


1. Выготский С.Л. Собрание сочинений: В 6 т. — М., 1982. — Т. 2.
2. Лурия А.Р. Маленькая книжка о большой памяти. Ум мнемониста. — М., 1968.
3. Психология памяти / Под ред. Ю.Б.Гиппенрейтер, В.Я. Романова. М.:ЧеРо, 2002.


**Թեմա 4.**
**Մտածողություն. հասկացությունը, տեսակները եւ տեսությունները (6 ժամ)**

1. Մտաշողությունը որպես ամբողջի փոխարինում նրա մասերով (Ու. Ջեյմս):
2. Մտածողությունը որպես ինսայթ (Կ. Դունկեր):
3. Ինտելեկտը որպես հարմարման բարձրագույն ձեւ (Ժ. Պիաժե):
4. Մտածողությունը որպես արտացոլման բարձրագույն ձեւ (Ա. Լեոնտեւ):
5. Մտածողությունը որպես գործընթաց (Ս. Ռուբինշտեյն):
6. Մտածողության ակնառու-գործնական, ակնառու-պատկերավոր եւ բառատրամաբանական տեսակների հիմնական առանձնահատկությունները:
7. Վիզուալ մտածողություն (Ռ. Արնխեյմ):
8. Գործնական եւ տեսական մտածողության տեսակների առանձնահատկություններն ու փոխհարաբերությունները (Բ. Կեպլով):
9. Ստեղծագործական եւ քննադատական մտածողությունների վերլուծությունը (Գ. Լինդսեյ, Կ. Հոլլ, Դ. Հալպերն):
10. Մտածողության հոգեբանության Վյուրցբյուրգյան դպրոց (Օ. Կյուլպե, Ն. Ախ, Օ. Զելց):
11. Մտածողության ուսումնասիրությունները բիհեյվիորիզմի ներքո (Ջ. Ուոտսոն, Է. Թորնդայկ):
12. Մտածողության ուսումնասիրման անձնային մոտեցում (Զ. Ֆրոյդ, Կ. Յունգ):

***Գրականություն***


1. Вертгеймер М. Продуктивное мышление. М, Прогресс, 1987.
2. Мартиросян К. — Мыщление и речь. Ереван 2002.
3. Миллер, Дж. Программы и структура поведения. — М.:, 2000.
4. Основные направления исследований психологии мышления в капиталистических странах/под ред. Е.В.Шороховой М.: 1966.
5. Халперн Д. Психология критического мышления. СПб, 2000,
6. Хрестоматия по общей психологии. Психология мышления / под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.В. Петухова. — М.: Изд-во МГУ, 1981.


**Թեմա 5.**
**Դրդապատճառները եւ հույզերը մտածողական գործունեությունում: Մտածողության անհատական առանձնահատկությունները: (4 ժամ)**

1. Մտածողության ներքին եւ արտաքին դրդապատճառները: Նպատակաձեւավորում (Օ. Տիխոմիրով)
2. Խնդրային իրավիճակ. էությունը, կառուցվածքը (Ա. Մատյուշկին):
3. Մտածողական գործընթացում դրդապատճառների ձեւավորման գործընթացը (Ա. Բրուշլինսկի):
4. Մտածողության եւ հույզերի փոխկապակցվածության փորձարարական ուսումնասիրությունները (Օ. Տիխոմիրով):
5. Հուզական ակտիվացման կարգավորող եւ էվրիստիկ գործառույթները:
6. Էքստրավերտ եւ ինտրովերտ անձանց անհատական մտածողական առանձնահատկությունները (Կ. Յունգ):
7. Ճանաչողական ոճերը որպես իրականության ուսումնասիրման անհատական միջոցներ:

***Գրականություն***


1. Брушлинский А. В. Мышление и прогнозирование. Москва, Мысль, 1979.

2. Матюшкин, А.М. Проблемные ситуации в мышлении и обучении. — М.: Педагогика, 1972.
3. Психологические механизмы целеобразования / под ред. О.К.Тихомирова. — М.: Наука, 1977.
4. Мартиросян К. — Мышление и речь. Ереван 2002.
5. Тихомиров, О.К. Психология мышления М.: 1984.
6. Хрестоматия по общей психологии. Психология мышления / под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.В. Петухова. — М.: Изд-во МГУ, 1981.

**Թեմա 6.**
**Ինտելեկտի ուսումնասիրման հիմնախնդիրները: (2 ժամ)**

1. Մտածողության եւ ինտելեկտի փոխհարաբերությունը:
2. Ինտելեկտը որպես ընդհանուր ընդունակություն (Դրուժինին):
3. Ինտելեկտի բազմագործոնային տեսությունը (Ջ. Գիլֆորդ):
4. Ինտելեկտի կառուցվածքը (Մ. Խոլոդնայա):
5. Ինտելեկտի եւ ստեղծագործական ընդունակությունների փոխհարաբերությունների երեք խումբ տեսություններ:
6. Ստեղծագործական ընդունակությունների հոգեճանաչում (Ե. Տորրենս):

***Գրականություն***

1. Дружинин В. Н. Психология общих способностей. СПб, 2000.
2. Мартиросян К. — Мышление и речь. Ереван 2002.
3. Дружинин В. Н. - Психология общих способностей. СПб, 2000.
4. Кирхлер Э., Щротт А. - Принятие решений в организациях. Харьков, 2004.
5. Холодная, М.А. Психология интеллекта. СПб.: 2002.

**Թեմա 7.**
**Լեզու եւ խոսք: Խոսքի տեսությունները: (2 ժամ)**

1. Լեզվի եւ խոսքի էության մասին պատկերացումները:
2. Խոսքի տեսակները եւ գործառույթները:
3. Խոսքի զարգացումը օնթոգենեզում (Լ. Վիգոտսկի, Ժ. Պիաժե):
4. Ավտոնոմ եւ էգոցենտրիկ խոսքի հասկացությունները:



5. Ներքին խոսքի հոգեֆիզիոլոգիական ուսումնասիրությունները (Ա. Սոկոլով):

***Գրականություն***

1. Выготский, Л.С. Мышление и речь // Собр. Сочинений: в 6 т. — М.: Педагогика, 1982. — Т. 2. — С. 5 — 361.
2. Леонтьев, А.Н. Генезис человеческой речи и мышления // Психологический журнал. 1988. №4. С.139 — 151.
3. Мартиросян К. — Мыщление и речь. Ереван 2002.
4. Соколов, А.Н. Внутренняя речь и мышление. — М., 1977.

**Թեմա 8.**
**Երեւակայությունը որպես ճանաչողական գործընթաց: Երեւակայության տեսությունները: Երեւակայության զարգացումը եւ նրա գնահատումը: (6 ժամ)**

1. Երեւակայության սահմանման հիմնախնդիրը:
2. Երեւակայության տեսակները:
3. Ստեղծագործական երեւակայության յուրակերպությունը (Լ. Վիգոտսկի, Ս. Ռուբինշտեյն, Ա. Ժետրովսկի):
4. Երեւակայության զարգացման չորս փուլ (Տ. Ռիբո):
5. Գեշտալտ հոգեբանների հայացքները երեւակայության բնույթին եւ զարգացմանը (Կ. Կոֆֆկա, Ռ. Արնխեյմ):
6. Ստեղծագործությանը քանակական մոտեցումը (Ջ. Գիլֆորդ):
7. Ստեղծարարության հինգ մակարդակները (Ջ. Թեյլոր):
8. Երեւակայության դերը ճանաչողական գործընթացում (Լ. Վիգոտսկի):
9. Երեւակայությունը խաղային գործունեությունում (Դ. Էլկոնին):
10. Ստեղծարարությունը որպես արդյունք, գործընթաց եւ անձնային ինտեգրալ հատկություն (Ջ. Թեյլոր, Գ. Ուոլլես, Ե. Կորրենս):
11. Ստեղծագործական երեւակայության հնարները:

***Գրականություն***

1. Брушлинский А.В. Воображение и познание. // Вопросы философии. — 1967. - №11.

2. Выготский Л.С. Воображение и творчество в детском возрасте. М.: Просвещение, 1991.
3. Горский Д.П. Вопросы абстракции и образование понятий. — М., 1961
4. Коршунова Л.С. Воображение и его роль в познании. — М., 1979
5. Рибо Т. Творческое воображение. Спб., 1901.
6. Рубинштейн С.Л. Основы общей психологии: В 2-х т. Т. 1. — М., 1989.
7. Гилфорд Дж. Структурная модель интеллекта // Психология мышления. Москва, 1965. С. 31-38

**Թեմա 9.**
**Երեւակայության դերը ստեղծագործական աշխատանքում: (2 ժամ)**

1. Երեւակայությունը գեղարվեստական ստեղծագործական աշխատանքում:
2. Երեւակայությունը գիտական ստեղծագործական աշխատանում:
3. Գիտական ստեղծագործական աշխատանքի առանձնահատկությունները:
4. Երեւակայություն եւ ինտուիցիա:
5. Երեւակայությունը եւ մարդու ֆիզիոլոգիական ռեակցիաները:

***Գրականություն***

1. Бунге М. Интуиция и наука. — М., 1967
2. Выготский. Л. С. Психология искусства. Москва; 1986
3. Левинсон-Лессинг Ф.Ю. Роль фантазии в научном творчестве. — Пг., 1923
4. Пармон Э.А. Роль фантазии в научном познании. — М., 1984



# ԲԱԺԻՆ 3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ցանկացած, այդ թվում հոգեբանական մասնագիտական ուսուցման համար անհրաժեշտ է երկու սկզբերի՝ տեսականի եւ գործնականի, հավասարակշռություն: Գործնական փորձը գուցե եւ կարեւոր է, սակայն առանց տեսական հիմքի, որպես կանոն, մնում է սինկրետիկ ընդհանրացման մակարդակում: Հոգեբանական պրակտիկումն, այսպիսով, միավորում եւ վերափոխում է փորձի բոլոր ձեւերն էլ՝ առօրեական, փորձարարական, խորհրդատվական եւ տեսական» (Хозиев В.Б., 2003. С. 3):

«Հոգեբանական պրակտիկում» բաժնի նպատակն է ձեւավորել եւ ամրապնդել ուսանողների մոտ մարդու հոգեկան գործընթացների հետազոտման հմտություններն ու ունակությունները:

«Հոգեբանության հիմունքներ» առարկայի այս բաժնի գործնական աշխատանքների հիմնական խնդիրներն են.

- հոգեկան գործընթացների հետազոտման եւ դիագնոստիկայի հիմնական մեթոդների ծանոթացումն ու յուրացումը,
- հոգեկան գործընթացների հետազոտական գործունեության համար հոգեբանին անհրաժեշտ հմտությունների եւ ունակությունների ձեւավորումը,
- հոգեբանական հետազոտությունների անցկացման, արդյունքների մշակման, վերլուծության եւ ներկայացման հիմնական սկզբունքների յուրացումը գործնական օրինակների հիման վրա,

Աշխատանքն իրականացվում է ուսանողների կողմից լաբորատոր աշխատանքների միջոցով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հստակ կառուցվածքը, որն ընդգրկում է նպատակը, ստիմուլային նյութը եւ սարքավորումները, աշխատանքի ընթացքի բնութագրումը, հրահանգները հետազոտվողներին, տվյալների մշակման եւ վերլուծության առաջարկությունները:

Ստացված արդյունքներին ներկայացվող պահանջների պահպանման համար յուրաքանչյուր լաբորատոր աշխատանքի արդյունքում ուսանողների կողմից լրացվում է համապատասխան ձեւի բլանկ (հավելված 2):

# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիշողության հետազոտության պարագայում գործ ենք ունենում երեք հիմնական խնդիրներից մեկի հետ.

- որոշել եւ չափել մտապահման ծավալը եւ կայունությունը,
- բնութագրել մոռացման ֆիզիոլոգիական բնույթը,
- բնութագրել հիշողության բովանդակային կազմակերպման մակարդակները:

Մտապահման ծավալի եւ կայունության ուսումնասիրման մեթոդները բաժանվում են մի քանի խմբի.

1. իրար հետ չկապակցված տարրերի շարքի մտապահման հետազոտման մեթոդներ,
2. այդպիսի տարրերի երկար շարքի մտապահման հետազոտման մեթոդներ,

Մոռացման ֆիզիոլոգիական բնույթի հետազոտումը իր առաջ խնդիր է դնում ուսումնասիրել, թե նրա հիմքում ընկած են հետքերի թուլությունը, թե դրանց արգելակումը: Այսպիսի հետազոտությունները երկու հիմնական ուղղությամբ են ընթանում.

1. շարքի բաղադրիչների պահպանման ուսումնասիրում հայտնի ժամանակահատվածում,
2. ուսումնասիրվում է, թե ինչպես է պահպանման վրա ազդում կողմնակի գործունեությունը:

Հիշողության բովանդակային կազմակերպման մակարդակների ուսումնասիրումը իրականացվում է Լ. Վիգոտսկու, Լ. Զնակովի կողմից մշակված միջնորդավորված մտապահման ուսումնասիրման մեթոդներով:

### *Հիշողության ուսումնասիրման մեթոդիկաները*

**1. Կարճատեւ հիշողության ծավալի ուսումանսիրում (Ջեկոբսի մեթոդը):**

**Նպատակը՝** թվային նյութի հիման վրա որոշել կարճատեւ հիշողության ծավալը

**Աղբյուրը**#Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Учеб. пособие // Под общей ред. А.А. Крылова, С.А. Маничева. СПб.: Питер, 2000. 95 с.



**2. Օպերատիվ հիշողության առանձնահատկությունների ուսումնասիրում:**

**Նպատակը՝** ուսումնասիրել օպերատիվ հիշողության ծավալն այն պարագայում, երբ այն կրում է հիմնական ֆունկցիոնալ ծանրաբեռնվածությունը:

**Աղբյուրը՝** Лучшие психологические тесты для профотбора и профориентации / Отв. ред. А.Ф. Кудряшов. Петрозаводск, 1992. 6 с.

**3. Ոչ կամածին մտապահման եւ նրա արդյունավետության ուսումնասիրությունները (Պ. Զինչենկոյի մեթոդիկան):**

**Նպատակը՝** բացահայտել ոչ կամածին մտապահման արդյունավետության կախվածությունը մարդու գործունեության բնույթից:

**Աղբյուրը՝** Практикум по психологии / Под. ред. А.Н. Леонтьева, Ю.Б. Гиппенрейтер. М.: МГУ, 1972. 139 с.

**4. Ոչ կամածին եւ կամածին մտապահման արդյունավետության ուսումնասիրումը (Պ. Զինչենկոյի մեթոդիկան):**

**Նպատակը՝** ուսումնասիրել կամածին մտապահման առանձնահատկությունները, դրանք համեմատել ոչ կամածին մտապահման առանձնահատկությունների հետ:

**Աղբյուրը՝** Источник: Практикум по психологии / Под. ред. А.Н. Леонтьева, Ю.Б. Гиппенрейтер. М.: МГУ, 1972. 139 с.

**5. Անմիջական եւ միջնորդավորված մտապահման ուսումնասիրումը:**

**Նպատակը՝** պարզել, թե կապերի համակարգի վրա հիմնված հիշողությունը կարող է՞ մեծացնել անմիջական մտապահվող ինֆորմացիայի ծավալը:

**Աղբյուրը՝** Зинченко Т.П. Память в экспериментальной и когнитивной психологии. СПб.: Питер, 2002.

**6. Պիկտոգրամմաների մեթոդը:**

**Նպատակը՝** միջնորդավորված մտապահման արդյունավետության ուսումնասիրումը:

**Աղբյուրը՝** Лурия А.Р. Внимание и память. М., 1975.

**7. Մտապահման վրա նյութի իմաստավորվածության ազդեցության ուսումնասիրումը:**

**Նպատակը՝** ուսումնասիրել նյութի մտապահման արդյունավետությունը կախված նրա իմաստավորվածությունից:
**Աղբյուրը՝** Зинченко Т.П. Память в экспериментальной и когнитивной психологии. СПб.: Питер, 2002.

**8. Նյութի պահպանման վրա ազդող գործոնների ուսումնասիրումը:**
**Նպատակը՝** մնեմիկ հետքերի պահպանման վրա կողմնակի գործունեության ազդեցության ուսումնասիրումը:
**Աղբյուրը՝** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Учеб. пособие // Под общей ред. А.А. Крылова, С.А. Маничева. СПб.: Питер, 2000. 120 с.

**9. Մտապահման վրա հուզականության, նյութի նշանակալիության ազդեցության ուսումնասիրումը:**
**Նպատակը՝** հուզական երանգավորում ունեցող նյութի ազդեցությունը մտապահման վրա:
**Աղբյուրը՝** Сосновский Б.А. Лабораторный практикум по общей психологии. М., 1979. 51 с.

**10. Ուսուցման գործընթացի դինամիկայի ուսումնասիրումը:**
**Նպատակը՝** նյութի ուսուցանման գործընթացի ուսւոմնասիրումը:
**Աղբյուրը՝** Практикум по психологии / Под. ред. А.Н. Леонтьева, Ю.Б. Гиппенрейтер. М.: МГУ, 1972. 122 с.

**11. Ճանաչման եւ ակտիվ վերարտադրման գործընթացների համեմատումը:**
**Նպատակը՝** ուսումնասիրել նույն նյութի վերարտադրման եւ ճանաչման առանձնահատկությունները եվ համեմատել դրանք:
**Աղբյուրը՝** Практикум по психологии / Под. ред. А.Н. Леонтьева, Ю.Б. Гиппенрейтер. М.: МГУ, 1972. 125с.

**12. Մտապահման կախվածությունը անձի դիրքորոշումներից:**
**Նպատակը՝** ուսումնասիրել բառերի մտապահումը կախված անձի դիրքորոշումներից:
**Աղբյուրը՝** Лурия А.Р. Внимание и память. М., 1975.



**13. Հիշողության մեջ պահպանման ժամանակ նյութի որակական փոփոխությունների ուսումնասիրումը:**
**Նպատակը՝** ուսումնասիրել նյութի այն փոփոխություններն ու վերակառուցումները, որոնք տեղի են ունենում հիշողության մեջ պահպանման ժամանակ:
**Աղբյուրը՝** Зинченко Т.П. Память в экспериментальной и когнитивной психологии. СПб: Питер, 2002.

## ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՔ

Մտածողությունը փորձարարական ուսումնասիրման առարկա է դարձել համեմատաբար ավելի ուշ: Ժամանակակից փորձարարական հոգեբանության սահմաններում մտածողության ուսումնասիրումը ուղղված է մի քանի առանցքային հիմնախնդիրների բացահայտմանը.

- խնդրի լուծման եւ որոշման ընդունման օրինաչափությունների բացահայում,
- մտածողության հուզական, դրդապատճառային բաղադրիչների ուսումնասիրում,
- մտածողության ոճերի եւ անհատական առանձնահատկությունների հետազոտում,
- ստեղծագործական մտածողության առանձնահատկությունների բացահայտում,
- ինտելեկտի (IQ) չափման հիմնախնդիրներ,
- մտածողության զարգացման վարժությունների եւ մեթոդիկաների մշակում:

Մտածողության ուսումնասիրումը սերտորեն կապված է խոսքի ուսումնասիրման հետ: Գոյություն ունի խոսքի ուսումնասիրման երկու հիմնական մեթոդ՝ ուղիղ եւ անուղղակի: Ուղիղ մեթոդներում հետազոտվողը տալիս է գիտակցված պատասխաններ հետազոտման ստիմուլային նյութին: Անուղղակի մեթոդների պարագայում գիտակցական մոտեցումը թույլ է արտահայտված: Նրանց կարելի է դասել հոգեֆիզիոլոգիական, զուգորդական մեթոդները եւ սեմանտիկ դիֆերենցիալի մեթոդը:

Մտածողության եւ խոսքի հետազոտման խնդրի լուծումը կայանում է առավել օբյեկտիվ, հուսալի եւ տարաբնույթ մեթոդ-

ների եւ մեթոդիկաների մշակման մեջ, որոնք կօգնեն ուսումնասիրել վերոհիշյալ հոգեկան գործընթացները:

1. **Մտածողական գործընթացների ռիգիդության ուսումնասիրումը (նախկինի փորձի ազդեցությունը խնդրի լուծման միջոցի վրա):**

**Նպատակը՝** բացահայտել մտածողական գործընթացների ռիգիդության աստիճանը:

2. **Մտածողական գործընթացների լաբիլության ուսումնասիրումը («Բառային լաբիրինթոս» մեթոդիկան):**

**Նպատակը՝** բացահայտել մտածողական գործընթացների շարժունությունը կամ լաբիլությունը:

3. **Մտածողական օպերացիաների զարգացման մակարդակի դիագնոստիկա:**

**Նպատակը՝** հետազոտվողի մտածողական օպերացիաների զարգացման մակարդակի գնահատում: Մեթոդիկան ընդգրկում է մի հետեւյալ ենթաթեստերը.

- «Ավելորդի բացառում» (այն ունի բառային եւ պատկերային տարբերակներ)
- «Պարզ անալոգիաներ»
- «Բարդ անալոգիաներ»
- «Հասկացությունների համեմատում»
- «Ասացվածքների մեկնաբանում»
- «Էական ցուցանիշների առանձնացում»

4. **Ակնառու-պատկերավոր մտածողության ուսումնասիրում («Պիկտոգրամմա» մեթոդիկան):**

5. **Վերացական, տրամաբանական մտածողության ուսւոմնասիրում («Օրինաչափությունների հայտնաբերում» մեթոդիկան):**

6. **Ստեղծագործական եւ վերարտադրողական մտածողության ուսումնասիրում (դիրքորոշման ազդեցությունը մտածողական գործունեության յուրահատկության վրա):**



**Նպատակը՝** մտածողական գործունեության ստեղծագործականության վրա դիրքորոշման ազդեցության փորձարարական ստուգումը:

7. **Մտածողական ռազմավարությունների ուսումնասիրումը խնդրի լուծման գործընթացում (Բրուների մեթոդիկան):**

8. **Խնդրի լուծման օպտիմալ ռազմավարության մշակման գործընթացի ուսումնասիրումը («Հանոյական աշտարակ» մեթոդիկան):**

9. **«Օրինաչափությունների հաստատում» թեստը:**

**Նպատակը՝** մեթոդիկան ծառայում է մտածողության որակների գնահատմանը՝ վերլուծության եւ համեմատման ընդունակություն, տրամաբանական կառույցներ ստեղծելու ունակություն, զուգորդական կապերի առաջացման արագություն, նմանության եւ տարբերության հաստատում, մտային աշխատանքի մի ոճից մեկ այլի տեղափոխման արագություն:

10. **Զուգորդումների տեսակների ուսումնասիրում («Զուգորդական գիտափորձ» մեթոդիկան):**

**Նպատակը՝** ուսումնասիրել զուգորդումների տեսակները եւ կախված զուգորդման տեսակից լատենտ փուլի տեւողությունը:

11. **Արտիկուլյար խոչընդոտների առկայության պարագայում խոսքի հասկացման ուսումնասիրում:**

12. **Խոսքի ինֆորմատիվ եւ ազդեցիկ գործառույթների ուսումնասիրում:**

**Նպատակը՝** համատեղ գործունեության իրականացման ժամանակ խոսքի ազդեցության ուսումնասիրումը:

***Գրականություն***


1. Глуханюк Н.С., Дьяченко Е.В., Семенова С.Л. Практикум по общей психологии: Учеб. Пособие. М.: Изд-во Московского психо-

лого-социального института; Воронеж: НПО «МОДЭК», 2003. С. 126—141.
2. Основы психологии: Практикум / Ред.-сост. Л.Д. Столяренко.- Ростов н/Д: «Феникс», 2002. С. 58-84.
3. Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Учебное пособие / Под общей ред. А.А. Крылова, С.А. Маничева. СПб.: Изд-во «Питер», 2000. С. 139—205.
4. Практикум по экспериментальной психологии. Вып. 2 / Под ред. Ю.К. Корнилова, В.Д. Шадрикова. Ярославль, 1975. 154 с. С. 90-151.
5. Словарь-справочник по психологической диагностике / Бурлачук Л.Ф., Морозов С.М. Киев: Наук. Думка, 1989. 200 с.
6. Хозиев В.Б. Практикум по общей психологии: Учебное пособие для студ. Высш. Учеб. Заведений. М.: Изд. Центр «Академия», 2003.- С. 14–28, 63—122, 134—140.

## ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Երեւակայությունը սուբյեկտի գործունեության ծրագրավորման եւ կանխատեսման գործառույթն է կատարում՝ նրա արդյունքի վերջնական կամ ընթացիկ մոդելի ստեղծման միջոցով: Այն անհրաժեշտ է անորոշ իրավիճակներում մարդու վարքի ծրագրերի իրականությանը փոխարինող պատկերների եւ երեւույթների բնութագրիչներին համապատասխան պատկերացումների ստեղծման համար:

Երեւակայության ուսումնասիրությունները գործնականում առավելապես ուղղված են ստեղծագործական ընդունակությունների բացահայտմանը, անհատական տարբերությունների գնահատմանը, պատկերացումների առանձնահատկությունների որակական չափմանը, երեւակայության գործընթացների եւ հնարների զարգացմանը:

**1. Պատկերացումներ եւ երեւակայություն:**
**Նպատակը՝** պատկերացումների հստակության գնահատում (ինքնադասակարգման մեթոդի օգնությամբ):



**2. Երեւակայության արդյունավետության ուսումնասիրում:**
**Նպատակը՝** բացահայտել երեւակայության արդյունավետության մակարդակը:

**3. Երեւակայության անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում:**
**Նպատակը՝** բացահայտել երեւակայության բարդության եւ պատկերացումների հստակության աստիճանը, ինչպես նաեւ երեւակայության կարծրատիպության կամ էլ յուրահատկության առանձնահատկությունները:

**4. Ստեղծագործական երեւակայության ուսումնասիրում**
**Նպատակը՝** գնահատել ստեղծագործական երեւակայության առանձնահատկությունները

***Գրականություն***

1. Практикум по общей психологии / В.В. Богословский, Т.И. Бочкарева, А.И. Великородн. Под ред. А.И. Щербакова. — М.: Просвещение, 1979. С.302.
2. Практикум по общей психологии: Учеб. пособие для студентов пед. ин-тов / А. И. Абраменко, А.А. Алексеев, В.В. Богословский и др.; Под ред. А,И. Щербакова. 2-е изд. — М.: Просвещение, 1990. С.288.
3. Практикум по общей и экспериментальной психологии: Учеб. пособие / В. Д. Балин, В.К. Гайда, В.А. Ганзен и др.; Под обшей ред. А.А. Крылова. — Л.: Изд-во Ленингр. ун-та, 1987. С. 255.
4. Практикум по психодиагностике. Конкретные психодиагностические методики / Ред. колл. А.И. Зеличенко, И.М. Карлинская, В.В. Столин, А.Г. Шмелев. — М.: Изд-во Моск. ун-та, 1989. С. 176.
5. Практикум по психодиагностике. Психодиагностика мотивации и саморегуляции / Ред.колл. А.И. Зеличенко, И.М. Карлинская, С.Р. Пантилеев и др. — М.: Изд-во Моск. ун-та, 1990. С.160.
6. Практикум по психодиагностике. Психодиагностические материалы / Под ред. А.А. Бодалева, И.М. Карпинской, С.Р. Пантилеева, В.В. Столина. — М.: Изд-во Моск. ун-та, 1988. С.141.
:1 Практикум по психологии / Под ред. А.Н. Леонтьева, Ю.Б. Гиппенрейтер. — М.: Изд-во Моск. ун-та. 1972. С.248.#

# 4. ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

### *Յիշողության հասկացությունը, տեսակները*

1. Նշված գիտնականներից ո՞վ է նշել, որ հիշողությունը ընդգրկում է երկու բաղադրիչ. 1. հայտնի փաստի մտապահում, 2. նույն փաստի վերհիշում կամ վերարտադրում.

*ա/ Ու. Ջեյմս,*
*բ/ Ս. Ռուբինշտեյն,*
*գ/ Զ. Ֆրոյդ,*
*դ/ Լ. Վիգոտսկի:*

2. Ս. Ռուբինշտեյնը հիշողության դասակագումն իրականացնում էր հիմնվելով հետեւյալ դասակարգիչների վրա.

*ա/ վերարտադրմանը ծառայող լավագույն զգայական ոլորտը,*
*բ/ մտապահվող նյութի բնույթը,*
*գ/ մտապահման արագությունը, տեւողությունը, առարկան եւ ճշգրտությունը,*
*դ/ բոլոր պատասխանները ճիշտ են:*

3. Տ. Ռիբոն քննարկելով հիշողության ընդհանուր աղճատումներն առանձնացնում է դրանց չորս մակարդակ՝ ժամանակավոր, զարգացող, բնածին եւ…

*ա/ հուզական,*
*բ/ պարբերական,*
*գ/ վերացական,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*

4. Լ. Վիգոտսկին իր հետազոտություններում ապացուցեց, որ փորձի ժամանակ հոմոգեն ֆոնի փոխարինումը ոչ հոմոգենով կամ արգելքի ներմուծումը խանգարում են էյդետիկ պատկերին միավորվել ընկալման հետ եւ բարձրացնում են նրան մի աստիճան բարձր՝ վերածելով.

*ա/ պատկերացման,*
*բ/ զգայության,*
*գ/ երեւակայական պատկերի,*
*դ/ կամային ճիգի:*

5. Յետեւյալ գիտնականներից ով էր դիտարկում հիշողությունը որպես վարքային մեխանիզմների ամրապնդման գործընթաց.



*ա/ Ս. Ռուբինշտեյն,*
*բ/ Ու. Ջեյմս,*
*գ/ Ջ. Ուոտսոն,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*

### *Յիշողության փորձարարական ուսումնասիրությունները*

1. Պ. Բլոնսկին առանձնացնելով հիշողության մոտորային, աֆֆեկտիվ, պատկերային եւ բառային տեսակները դրանք համարում հիշողության ինչպիսի՞ մակարդակներ.

*ա/ մշակութային,*
*բ/ գենետիկական,*
*գ/ սեմանտիկական,*
*դ/ զգայական:*

2. Ֆ. Բարտլետտը իր հետազոտությունների արդյունքում նշում է, որ.

*ա/ առօրեական կյանքում մտապահումը շատ հազվադեպ է իրենից բնօրինակի ճշգրիտ պատճեն ներկայացնում,*
*բ/ անգիր ուսուցանման հետազոտությունները ցույց են տալիս, որ առկա է մոռացման նորմալ եւ կայուն կոր,*
*գ/ եթե մենք «լավ հիշողություն» ասելով հասկանում ենք կյանքի ներկայացվող պահանջներին համապատասխանելու առավել արդյունավետի մտապահում, ապա նրա գաղտնիքը նախկինի փորձի կազմակերպումն է բազում հետաքրքրությունների ազդեցության տակ,*
*դ/ բոլոր բատասխանները ճիշտ են:*

3. Յետեւյալ գիտնականներից ով է սահմանել հիշողությունը որպես բացակայության պայմաններում սոցիալական ռեակցիա.

*ա/ Պ. Ժանեն,*
*բ/ Գ. Էբբինհաուզը,*
*գ/ Ջ. Ուոթսոնը,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*

4. Ա. Լեոնտեւը սահմանելով հիշողության զարգացման զուգահեռանիստի սկզբունքը, այն հասկացել է որպես.

*ա/ հիշողության բարձրագույն ձեւերի զարգացումն ընթանում է զուգորդական կապերի քանակության ընդլայնմամբ,*
*բ/ հիշողության բարձրագույն ձեւերի զարգացումն ընթանում է վարքային ձեւերի ուսուցանմամբ,*
*գ/ հիշողության բարձրագույն ձեւերի զարգացումն ընթանում է արտաքին խթան-նշանների միջոցով մտապահման զարգացմամբ,*
*դ/ բոլոր պատասխանները ճիշտ են:*

5. Ո՞ր հեղինակն է մշակելով մտածողության համակարգի կառուցվածքային մոդելը նրա կառուցվածքում առանձնացրել սենսոր ռեգիստր, կարճատեւ պահոց, երկարատեւ պահոց:
*ա/ Ա. Սմիռնով,*
*բ/ Ռ. Ատկինսոն,*
*գ/ Բ. Զեյգարնիկ,*
*դ/ Գ. Էբինհաուզ:*

### *Հիշողության գործընթացները*

1. Համաձայն Ա. Սմիռնովի հետազոտությունների ոչ կամածին մտապահման պարագայում ինչն է առավել լավ մտապահվում.
*ա/ հիմնական գործունեության արգելքները,*
*բ/ մտքերը,*
*գ/ այլ մարդկանց վերաբերմունքը,*
*դ/ բոլոր պատասխանները ճիշտ են:*
2. Նշված գիտնականներից ով էր մոռացումը համարում զուգորդական կապերի թուլացման եւ վերացման հետեւանք.
*ա/ Ա. Սմիռնով,*
*բ/ Բ. Զեյգարնիկ,*
*գ/ Գ. Էբինհաուզ,*
*դ/ Զ. Ֆրոյդ:*
3. Քննարկելով ավարտված եւ անավարտ գործողությունների մտապահման առանձնահատկությունները՝ Բ. Զեյգարնիկը գտնում էր, որ.
*ա/ անավարտ գործողությունները հիշվում են ավելի լավ քան ավարտունները,*
*բ/ ավարտված գործողությունները հիշվում են ավելի լավ քան անավարտները,*
*գ/ ավարտված եւ անավարտ գործողությունները հիշվում են հավասարապես,*
*դ/ անավարտ գործողությունները ընդհանրապես չեն հիշվում:*
4. Հետեւյալ գիտնականներից ո՞վ էր մոռացման հիմքում դիտարկում անձի դրդապատճառները.
*ա/ Ա. Սմիռնով,*
*բ/ Բ. Զեյգարնիկ,*
*գ/ Գ. Էբինհաուզ,*
*դ/ Զ. Ֆրոյդ:*
5. Պ. Զինչենկոն համարում էր, որ ոչ կամածին մտապահումը երկու գործառույթների արդյունքների ամբողջություն է.



*ա/ պատահական մտապահման եւ զուգորդական կապերի առաջացման,*
*բ/ նպատակաուղղված գործունեության եւ կողմնորոշիչ ռեակցիաների,*
*գ/ հուզական գերլարվածության եւ կամային ճիգի,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*

### *Հիշողության զարգացումը*

1. Լ. Վիգոտսկին գտնում էր, որ հիշողության զարգացումը պետք է ուսումնասիրել.
*ա/ հիշողության ներսում կատարվող փոփոխությունների,*
*բ/ հոգեկան այլ երեւույթների շարքում հիշողության զբաղեցրած դերի տեսանկյունից,*
*գ/ երկու պատասխաններն էլ ճիշտ են,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*
2. Նախադպրոցական տարիքում կամածին մտապահման Զ. Իստոմինայի հետազոտությունները վկայում են, որ.
*ա/ մնեմիկ գործընթացների վերակառուցման էությունը նրանում է, որ երեխան կարողանում է իր առջեւ դնել գիտակցական նպատակներ եւ մտապահել,*
*բ/ կամածին մատապահման անցումը բարդ գործընթաց է, որն ընդգրկում է երկու հիմնական փուլեր,*
*գ/ սկզբնականում մտապահման եւ վերհիշման գործընթացները պրիմիտիվ են եւ ոչ բավարար մասնագիտացած,*
*դ/ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:*
3. Ի. Հոֆֆմանը հիշողության ոլորտում նոր ինֆորմացիայի ստեղծման աղբյուր էր համարում.
*ա/ ինֆորմացիայի ինտեգրացիան,*
*բ/ ինֆորմացիայի լրացումը,*
*գ/ կոգնիտիվ տրամսֆորմացիաները,*
*դ/ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:*
4. Մնեմոտեխնիկական «Ջորդանո» համակարգի թերությունն է.
*ա/ մտապահման ընթացքում առաջ եկող հոգնածությամբ,*
*բ/ մտապահված ինֆորմացիայի մոռացման արագ տեմպը,*
*գ/ մտապահման ժամանակ հուզական գերլարման առաջացումը,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*
5. Մնեմոտեխնիկաներին վերաբերող պահպանված առաջին աշխատանքները թվագրվում են մ.թ.ա. 86-82թթ. եւ պատկանում են … գրչին:
*ա/ Սոկրատեսի,*

*բ/ Պլատոնի,*
*գ/ Ցիցերոնի,*
*դ/ Ավգուստինի:*

## ***Մտածողության հասկացությունը***

1. Համաձայն Ու. Ջեյմսի, մտածողության արվեստը կարելի է բնութագրել հետեւյալ գծերով.
*ա/ խորաթափանցությամբ եւ գիտելիքների պաշարով,*
*բ/ խնդրային իրավիճակի հետազոտմամբ եւ խնդրի առկայությամբ,*
*գ/ խնդրի առկայությամբ եւ գիտելիքների պաշարով,*
*դ/ օպերացիաների առկայությամբ եւ ընդունակություններով:*
2. Ո՞վ է հեղինակներից տվել հետեւյալ բնորոշումը. «Մտածողությունը ամբողջի փոխարինումն է իր մասերով եւ նրա հետ կապված հատկություններով եւ հետեւանքներով».
*ա/ Ս. Ռուբինշտեյն,*
*բ/ Ժ. Պիաժե,*
*գ/ Ու. Ջեյմս,*
*դ/ Կ. Դունկեր:*
3. Հեղինակներից ո՞վ է առաջարկել հետեւյալ սահմանումը. «Մտածողությունը գործընթաց է, որը խնդրային իրավիճակում ինսայթի միջոցով բերում է համապատասխան գործողություններին»:
*ա/ Ս. Ռուբինշտեյն,*
*բ/ Ժ. Պիաժե,*
*գ/ Ու. Ջեյմս,*
*դ/ Կ. Դունկեր:*
4. Համաձայն Ա. Լեոնտեւի կարծիքի. «Մտածողությունը օբյեկտիվ իրականության … գործընթաց է, որը կազմում է մարդկային ճանաչողության բարձրագույն մակարդակը»:
*ա/ հասկացման,*
*բ/ ճանաչման,*
*գ/ արտացոլման,*
*դ/ գիտակցման:*
5. Ս. Ռուբինշտեյնը դիտարկում է մտածողությունը որպես.
*ա/ գործընթաց,*
*բ/ խնդրային իրավիճակի էական կապերի եւ հարաբերությունների արտացոլման ակնթարթային գործընթաց,*
*գ/ միջավայրին օրգանիզմի հարմարման բարձրագույն ձեւ,*



*դ/ ամբողջի փոխարինումը նրա մասերով եւ դրա հետ կապված հատկություններով եւ հետեւանքներով:*

## ***Մտածողության տեսակները***

1. «Վիզուալ մտածողություն» տերմինն առաջարկվել է.
*ա/ Է. Բլեյերի,*
*բ/ Ռ. Արնհեյմի ,*
*գ/ Լ. Լեւի Բրյուլի,*
*դ/ Բ. Տեպլովի կողմից:*
2. Մտածողության որ տեսակն է ուղղված նոր մտքերի թերությունների բացահայտմանը.
*ա/ քննադատական,*
*բ/ ստեղծագործական,*
*գ/ տեսական,*
*դ/ գործնական:*
3. Կոնֆորմիզմը ….. մտածողության իրագործման խոչընդոտ է.
*ա/ աուտիկ,*
*բ/ պրոլոգիկ,*
*գ/ ստեղծագործական,*
*դ/ քննադատական:*
4. Գործնական եւ տեսական մտածողությանը վերաբերող ո՞ր պնդումն է ճշգրիտ.
*ա/ գործնական եւ տեսական մտածողության տարբերությունը մեխանիզմների տարբերությունն է,*
*բ/ գործնական եւ տեսական մտածողության տարբերությունը գործնականի հետ կապի տարբերությունն է,*
*գ/ գործնական եւ տեսական մտածողության տարբերությունն այն է, որ նրանցից մեկը կապված է պրակտիկայի հետ, իսկ մյուսը՝ ոչ,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*
5. ….. մտածողության խոչընդոտ է «չափազանց ագրեսիվ լինելու վախը»
*ա/ քննադատական,*
*բ/ վիզուալ,*
*գ/ ստեղծագործական,*
*դ/ գործնական:*

*Մտածողության հետազոտման տեսական մոտեցումները*

1. Համաձայն Ս. Ռուբինշտեյնի մտածողության զարգացման հիմնական մեխանիզմն է.
*ա/ բառային նշանների նշանակության յուրացումը,*
*բ/ սեփական առարկայական գործողությունների յուրացումը,*
*գ/ գիտելիքների յուրացումը,*
*դ/ մտածողական օպերացիաների ձեւավորումը:*
2. Համաձայն Օ. Տիխոմիրովի հետազոտությունների, հուզական ակտիվացումը, ազդելով խնդիրների լուծման գործընթացի վրա, նպաստում է.
*ա/ որոնման գոտու ընդլայնմանը,*
*բ/ որոնման գոտու ֆիքսացիային,*
*գ/ որոնման գոտու նեղացմանը,*
*դ/ որոշման կարծրատիպացմանը:*
3. Ո՞վ է խորհրդային հոգեբաններից ձեւակերպել մտածողության կառուցվածքի եւ գործառույթի միասնության օրենքը. «Ինչը մինչեւ որոշակի աստիճան գործառնում է, որոշում է, թե ինչպես է գործառում».
*ա/ Ս. Ռուբինշտեյնը,*
*բ/ Լ. Վիգոտսկին,*
*գ/ Օ. Տիխոմիրովը,*
*դ/ Պ. Գալպերինը:*
4. Օ. Տիխոմիրովը իր հետազոտություններում ինտելեկտուալ ակտիվության հիմնական մեխանիզմներ է դիտարկում.
*ա/ դրդապատճառները,*
*բ/ նպատակադրումը,*
*գ/ մտածողական օպերացիաները,*
*դ/ հույզերը:*
5. Ո՞ր գործոնների ազդեցության տակ, համաձայն Լ. Վիգոտսկու, տեղի է ունենում մտածողության զարգացումը.
*ա/ նշանների յուրացում,*
*բ/ այլ անձանց հետ փոխազդեցություն,*
*գ/ գործիքների օգտագործում (հաշվիչ փայտիկներ եւ այլն),*
*դ/ ժառանգականություն:*



*Հասկացությունների ձեւավորումը*

1. Հասկացությունը, այդ բառի իրական իմաստով, հանաձայն Լ. Վիգոտսկու, ձեւավորվում է.
*ա/ նախադպրոցական տարիքում,*
*բ/ կրտսեր դպրոցական տարիքում,*
*գ/ դեռահասության շրջանում,*
*դ/ հասուն տարիքում:*
2. Մտածողությունը համակարգերով բնութագրվում է նրանով, որ այն.
*ա/ բառի նշանակությունը չի որոշարկված մինչեւ վերջ եւ առանձին առարկաների չձեւակերպված սինկրետիկ միավորում է,*
*բ/ հասկացության մեջ վերացարկված գործոնները համադրվում են,*
*գ/ հասկացության մեջ առարկաները միավորվում են ինչ որ կոնկրետ փաստացի կապերի հիման վրա,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*
3. Հասկացությունների ձեւավորման ուսումնասիրման Ն. Ախի մեթոդիկայում առաջին փուլն է.
*ա/ որոնման փուլը,*
*բ/ փորձարկման փուլը,*
*գ/ վարժության փուլը,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*
4. Լ. Վիգոտսկին եւ Լ. Սախարովը հասկացությունների ձեւավորման ժամանակ էական դերակատարում է հատկացվում.
*ա/ պատճառական միտմանը,*
*բ/ նպատակային պատկերացման նշանակությանը,*
*գ/ բառին,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*
5. Ջ. Բրուների կարծիքի համաձայն, հասկացության ձեւավորման ժամանակ  ինֆորմացիայի ընդունման այս կամ այն ռազմավարության բարձրացման պայմաններից մեկը.
*ա/ խնդրի գործոնների թվի նվազեցումն է,*
*բ/ խնդրի լուծման ժամանակ վարժություններն են,*
*գ/ խնդրի գործոնների թվի ավելացումն է,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*

## *Լեզու եւ խոսք: Խոսքի տեսությունները*

1. Համաձայն Լ. Վիգոտսկու ավտոնոմ խոսքը հետեւյալ գործառույթն է իրականացնում.
*ա/ նոմինատիվ,*
*բ/ ազդանշանային,*
*գ/ ընդհանրացնող,*
*դ/ կախարդական:*
2. Տվյալ գիտնականի փորձարարական աշխատանքներում ուսումնասիրվել են երեխայի էգոցենտրիկ խոսքի հետեւյալ ասպեկտները՝ հասկացման իլուզիա, կոլեկտիվ մենախոսություն եւ վոկալիզացիա:
*ա/ Լ. Վիգոտսկի*
*բ/ Ժ. Պիաժե*
*գ/ Ա. Սոկոլովա*
*դ/ Ջ. Բրուներ*
3. Ժ. Պիաժեի կարծիքով էգոցենտրիկ խոսքին չի վերաբերում
*ա/ փոխանցվող ինֆորմացիան,*
*բ/ էխոլոգիան,*
*գ/ մենախոսությունը,*
*դ/ կոլեկտիվ մենախոսությունը:*
4. Էգոցենտրիկ խոսքին վերաբերող որ պնդումն է ճիշտ.
*ա/ համաձայն Ժ. Պիաժեի կարծիքի էգոցենտրիկ խոսքը որ մի գործառույթ չի իրականացնում երեխայի մտածողությունում եւ վարքում,*
*բ/ համաձայն Լ. Վիգոտսկու կարծիքի էգոցենտրիկ խոսքը ինտերհոգեկան գործառույթների ինտրահոգեբանականի անցման երեւույթ է,*
*գ/ համաձայն Ժ. Պիաժեի կարծիքի էգոցենտրիկ խոսքը մանկական խոսքի սոցիալիզացիայի անկատարելիության եւ անբավարարության ուղիղ արտահայտում է,*
*դ/ բոլոր պատասխանները ճիշտ են:*
5. Համաձայն Ա. Սոկոլովի կարծիքի մտքի եւ խոսքի հարաբերությունը նրանում է, որ.
*ա/ միտքը կարող է նախորդել արտաքին խոսքին,*
*բ/ միտքը կարող է նախորդել մենախոսության ձեւով ներկայացվող ներքին խոսքին,*
*գ/ միտքը չի կարող նախորդել կրճատ ներքին խոսքին,*
*դ/ բոլոր պատասխանները ճիշտ են:*



## *Երեւակայությունը որպես ճանաչողական գործընթաց*

1. Որոշեք, թե ստեղծագործական երեւակայության ինչ հնարներ են կիրառվել հետեւյալ օրինակներում.
1.1 Դիցաբանությունում եւ պատմական լեգենդներում նկարագրվում են տարբեր ֆանտաստիկ էակներ՝ կենտավրներ, սֆինքս եւ այլն.
*ա/ ագլյուտինացիա,*
*բ/ տիպականացում,*
*գ/ ուժեղացում - թուլացում,*
*դ/ սրում:*
1.2 Խոսելով տարրբեր գեղարվեստական հերոսների ստեղծման մասին՝ Ա. Գորկին գրում էր. «Նրանք, իհարկե, ստեղծվում են ոչ դիմանկարային՝ ինչ որ մարդուց, այլ նույն գծի, նույն տրամադրության, նույն բնավորության 30-50 մարդ, որոնք ստեղծում են Օբլոմովին, Օնեգինին, Ֆաուստին, Համլետին, Օթելլոյին եւ այլն»:
*ա/ ագլյուտինացիա,*
*բ/ տիպականացում,*
*գ/ հիպերբոլիզացիա,*
*դ/ սրում:*
1.3 Նայեց իսկան իր աջ ձեռքին, տեսավ այնտեղ Իլյա Մուրոմեցին: Բռնեց նրա ոսկեգանգուր մազերից եւ վերջինիս իր ձիով դրեց իր գրպանը.
*ա/ ագլյուտինացիա,*
*բ/ տիպականացում,*
*գ/ հիպերբոլիզացիա,*
*դ/ սրում:*
2. Որ բնութագրումներն են համապատասխանում «երեւակայություն» հասկացությանը.
*ա/ հոգեկան գործընթաց, որն արտահայտվում է սուբյեկտի առարկայական գործունեության միջոցների, պատկերների եւ վերջնական արդյունքի ստեղծմամբ,*
*բ/ հոգեկան գործընթաց, որն արտահայտվում է օբյեկտի բնութագրմանը համապատասխանող պատկերների ստեղծմամբ,*
*գ/ հոգեկան գործընթաց, որն արտահայտվում է խնդրային անորոշ իրավիճակում վարքի ծրագրի ստեղծմամբ,*
*դ/ բոլոր պատասխանները ճիշտ են:*

3. Համաձայն Լ. Վիգոտսկու կարծիքի, երեւակայության զարգացումը կախված է.
*ա/ հիշողության զարգացումից,*
*բ/ խոսքի զարգացումից,*
*գ/ գլխուղեղի զարգացումից,*
*դ/ պահանջմունքների բավարարման մակարդակից:*
4. Համաձայն Ժ. Պիաժեի՝ երեւակայությունից իրատեսական մտածողության անցումային աստիճանն է.
*ա/ հասկացությունը,*
*բ/ իրականության ճանաչմանն ուղղված մտածողությունը,*
*գ/ մանկական էգոցենտրիզմը,*
*դ/ ճիշտ պատասխանը բացակայում է:*
5. Երեւակայության որ տեսակին է համապատասխանում հետեւյալ պնդումը. «Երեւակայության այս տեսակը հիմնվում է բնութագրմանը համապատախան այս կամ այն պատկերների ստեղծման վրա».
*ա/ ակտիվ վերաստեղծող երեւակայություն,*
*բ/ պասիվ կանխամտածված երեւակայություն,*
*գ/ պասիվ չկանխամտածված երեւակայություն,*
*դ/ ակտիվ ստեղծագործական երեւակայություն:*





## ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Հիշողությունը որպես սինթետիկ հոգեկան իմացական գործընթաց (Կ. Վեկկեր):
2. Հիշողության ուսումնասիրման մեթոդները:
3. Հիշողության կորուստներ. ընդհանուր ամնեզիաներ (Թ. Ռիբո):
4. Ճանաչման գործընթացները եւ մոդելները (Ռ. Կլացկի):
5. Սենսոր ռեգիստորներ (Ռ. Կլացկի):
6. Հիշողության մի ֆենոմենի մասին (Ռ. Լուրիա):
7. Հիշողության էվոլուցիան եւ ժամանակի հասկացությունը: (Պ. Ժանե):
8. Հիշողությունը գիտակցության հոգեբանության շրջանակներում (Ու. Ջեյմս):
9. Հիշողության Ռ. Ատկինսոնի եռաբաղադրիչ մոդելը:
10. Հիշողությունը զուգորդական տեսության սահմաններում (Հ. Էբբինհաուզ):
11. Հիշողության մեկնաբանումը բիհեյվիորիզմի տեսանկյունից (Ջ. Ուոտսոն):
12. Հիշողության գենետիկական տեսության հիմնադրույթները (Պ. Բլոնսկի):
13. Մտապահման Ֆ. Բարտլետի տեսությունը:
14. Մտապահման բարձրագույն ձեւերի զարգացումը (Ա. Լեոնտեւ):
15. Մտապահման արդյունավետությունը կախված նյութի բնույթից:
16. Անավարտ եւ ավարտված գործողությունների վերարտադրումը (Բ. Զեյգարնիկ):
17. Ոչ կամածին մտապահում եւ գործունեություն (Պ. Զինչենկո):
18. Կամածին եւ ոչ կամածին մտապահման ուսումնասիրությունները (Ա. Սմիռնով):
19. Հիշողության համակարգերը (Պ. Լինդսեյ, Դ. Նորման):
20. Տրամաբանական եւ մեխանիկական հիշողություն (Ա. Լեոնտեւ):
21. Կարճատեւ հիշողության կառուցվածքավորումը եւ ծավալը (Ռ. Կլացկի):

22. Երկարատեւ հիշողության ցանցային մոդելները (Ռ. Կլացկի):
23. Մնեմոնիկա եւ մնեմոտեխնիկաներ (Գ. Չելպանով):
24. Մնեմոնիկական համակարգեր (Ռ. Սոլսո):
25. Ինֆորմացիայի վերամշակման մեր ընդունակության որոշ սահմանների մասին (Ջ. Միլլեր):
26. Հիշողության յուրահատուկ գործառույթների մշակութային զարգացումը (Լ. Վիգոտսկի, Ա. Լուրիա):
27. Հիշողությունը եւ նրա զարգացումը մանկական տարիքում (Լ. Վիգոտսկի):
28. Հիշողության կազմակերպման մակարդակները (Ի. Հոֆման):
29. Կարճատեւ հիշողության ծավալի ուսումանսիրում (Ջեկոբսի մեթոդը):
30. Ոչ կամածին մտապահման եւ նրա արդյունավետության ուսումնասիրությունները (Պ. Զինչենկոյի մեթոդիկան):
31. Մտապահման վրա նյութի իմաստավորվածության ազդեցության ուսումնասիրումը:
32. Մտապահման անձի դիրքորոշումներից կախվածության ուսումնասիրումը:
33. Հիշողության մեջ պահպանման ժամանակ նյութի որակական փոփոխությունների ուսումնասիրումը:
34. Մտածողությունը եւ անմիջական զգայական ճանաչումը: Մտածողության սահմանումը (Լ. Վեկկեր):
35. Մտածողության սեռային հատկությունները (Լ. Վեկկեր):
36. Մտածողության ուսումնասիրման գիտությունները, առարկան եւ մեթոդները:
37. Խնդիրը որպես մտածողության օբյեկտ, նրա կառուցվածքը: Տարբեր հոգեբանական դպրոցների մոտեցումների համեմատական վերլուծություն:
38. Մտածողությունը գիտակցության հոգեբանության շրջանակներում (Վ. Վունդտ, Ու. Ջեյմս):
39. Մտածողության հոգեբանության Վյուրցբյուրգյան դպրոց (Օ. Կյուլպե, Ն. Ախ, Օ. Զելց):
40. Ստեղծագործական եւ վերաստեղծող հոգեկան գործունեության օրենքները (Օ. Զելց):
41. Մտածողության հիմնախնդրին գեշտալտհոգեբանների մոտեցումը (Կ. Դունկեր, Վ. Կելլեր, Մ. Վերթհայմեր):
42. Արդյունավետ մտածողության առանձնահատկությունները (Մ. Վերթհայմեր):



43. Մտածողությունը որպես ինտելեկտուալ օպերացիաների համակարգ (Ժ. Պիաժե):
44. Անձնային (դրդապատճառային) մոտեցում մտածողության ուսումնասիրմանը (Զ. Ֆրոյդ, Կ. Յունգ):
45. Ակնառու-գործնական, ակնառու-պատկերավոր եւ բառատրամաբանական մտածողությունը որպես օնթոգենեզում մտածողության զարգացման տեսակներ եւ փուլեր:
46. Տեսական եւ գործնական մտածողություն, նրանց համեմատական բնութագրումը (Բ. Տեպլով):
47. Տեսողական (վիզուալ) մտածողության առանձնահատկությունները (Ռ. Արնհեյմ):
48. Ստեղծագործական եւ քննադատական մտածողության առանձնահատկությունները (Գ. Լինդսեյ, Կ. Հոլլ, Ռ. Թոմպսոն):
49. Քննադատական մտածողության հիմնական գործառույթներն ու առանձնահատկությունները (Դ. Հալպերն):
50. Մտածողությունը որպես գործընթաց: Մտածողության օպերացիաները (Ս. Ռուբինշտեյն):
51. Մտածողությունը որպես գործունեություն (Ա. Լեոնտեւ):
52. Դրդապատճառները եվ հույզերը մտածողական գործունեության կառուցածքում (Օ. Տիխոմիրով):
53. Նպատակադրում եւ մտածողություն (Օ. Տիխոմիրով):
54. Մտածողություն եվ ինտելեկտ: Ինտելեկտի թեստոլոգիական մոդելները (Կ. Սպիրմեն, Լ. Թերսթոուն, Ջ. Գիլֆորդ):
55. Ինտելեկտի ժամանակակից պատկերացումները (Վ. Դրուժինին, Մ. Խոլոդնայա):
56. Շաբլոն եւ ոչ շաբլոն մտածողության առանձահատկությունները (Է. դե Բոնո):
57. Խնդրի լուծումը պայմանավորող հիմնական գործոնները (Դ. Կրեչ, Ռ. Կրաչֆիլդ, Ն. Լիվսոն):
58. Ստեղծագործության փորձարարական ուսումնասիրման հիմնական ուղղությունները (Խ. Տրիկ):
59. Էքստրավերտի եւ ինտրովերտի մտածողությունը (Կ. Յունգ):
60. Որոշման ընդունման որակական մոդելները (Է. Կիրխլեր, Ա. Շրոտտ):
61. Լեզու եվ խոսք. ընդհանուր հասկացումը, էությունը (Լ. Վեկկեր):
62. Խոսքի տեսակները:
63. Էգոցենտրիկ խոսքի բնույթը. համեմատական վերլուծություն (Լ. Վիգոտսկի, Ժ. Պիաժե):

64. Ներքին խոսքի հոգեֆիզիոլոգիական առանձնահակություն-ները (Ա. Սոկոլով):
65. Հասկացությունների ձեւավորում, նրա փորձարարական ու-սումնասիրման ուղղությունները (Ջ Միլլեր, Ա. Լեոնտեւ, Հ. Օսգուդ):
66. Մտածողական գործընթացների ռիգիդության ուսումնասի-րումը (նախկինի փորձի ազդեցությունը խնդրի լուծման մի-ջոցի վրա):
67. Ակնառու-պատկերավոր մտածողության ուսումնասիրում («Պիկտոգրամմա» մեթոդիկան):
68. Ստեղծագործական եւ վերարտադրողական մտածողության ուսումնասիրում (դիրքորոշման ազդեցությունը մտածողա-կան գործունեության յուրահատկության վրա):
69. Զուգորդումների տեսակների ուսումնասիրում («Զուգորդա-կան գիտափորձ» մեթոդիկան):
70. Արտիկուլյար խոչընդոտների առկայության պարագայում խոսքի հասկացման ուսումնասիրում:
71. Երեւակայության սահմանման հիմնախնդիրները: Երեւակա-յություն եւ ժամանակ (Լ. Վեկկեր):
72. Երեւակայության ուսումնասիրությունները գեշտալտ հոգե-բանական դպրոցում (Վ. Վունդտ, Կ. Կոֆֆկա, Կ Կելլեր)
73. Երեւակայության տեսակները:
74. Ստեղծագործական երեւակայության հնարները:
75. Երեւակայության զարգացման օրենքը (Տ. Ռիբո):
76. Երեւակայության զարգացումը մանկական տարիքում (Լ. Վի-գոտսկի):
77. Երեւակայություն եւ խաղ (Դ. Էլկոնին):
78. Ստեղծագործական գործընթացների որակական առանձնա-հատկությունները (Ջ. Թեյլոր):
79. Երեւակայության անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում:
80. Ստեղծագործական երեւակայության ուսումնասիրում:





## *Հոգեբանական պրակտիկում*

## **Հիշողություն, մտածողություն, խոսք, երեւակայություն**

Գործնական աշխատանք №_____
Թեմա
Կատարման վայրը ք. Երեւան, ԵՊՀ
Ամսաթիվը՝ «   » ____________ 2008 թ.
Ժամանակը ______ ժամ, ______ րոպե
Մասնակիցները (Ա.Ա.Հ. պարտականությունների բաշխումը հե-տազոտող/հետազոտվող)

1. Աշխատանքի նպատակը եւ տեսակը (հետազոտական կամ դիագնոստիկ)
2. Հիմնական հասկացությունները
3. Հետազոտության օբյեկտը եւ առարկան
4. Հետազոտման հիպոթեզը (փորձարարական հետազոտման համար)
5. Աշխատանքի ընթացքը
6. Նյութերը եւ սարքավորումները
7. Հրահանգները
8. Հետազոտության արդյունքները.
    8.1 Հետազոտության արձանագրությունը
    8.2 Հետազոտվողի հաշվետվությունը (ինքնադիտման արդ-յունքներ)
    8.3 Հետազոտողի հաշվետվությունը (դիտման արդյունքներ)
9. Արդյունքների վերլուծությունը
    9.1 Տվյալների բնութագրումը
    9.2 Աղյուսակների տեսքով ընդհանրացված թվային տվյալ-ները
    9.3 Տվյալների գրաֆիկական ձեւավորում
10. Արդյունքների վերլուծություն եւ մեկնաբանում
11. Եզրակացություններ

Աշխատանքը ստուգել է __________ *դասախոսի ստորագրությունը*
«   » _________ 2008թ.